





Եվրոպական անվտանգության և
համագործակցության կազմակերպության
կենտրոնի գրասենյակ



ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չեկոյց

Իրավական հետազոտությունների Նորարարական կենտրոն



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ձեկույց

Հիմնական մշակող Սառա Շիրազյան

Իրավական հետազոտությունների նորարարական կենտրոն

Երեւան 2010

© ԵԱՀԿ 2010

Ձեկույցը պատրաստվել է «Իրավական հետազոտությունների նորարարական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի աջակցությամբ:

ISBN 978-92-9235-842-6



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Թումանյան 15, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ.....	4
ՍԱՅՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՔԸ.....	5
ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	11
ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	17
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	25
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....	25
<i>A POSTERIORI ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.....</i>	<i>27</i>
<i>ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ՊԱՅԵԼՈՒ ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄ.....</i>	<i>30</i>
<i>ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ.....</i>	<i>37</i>
<i>ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ.....</i>	<i>39</i>
<i>ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՐՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ.....</i>	<i>43</i>
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	48
ՀԱՎԵԼՎԱԾ.....	53

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը եւ «Իրավական հետազոտությունների նորարարական կենտրոն» հասարակական կազմակերպությունը սույն աշխատության մեջ համապարփակ եւ մեծարժեք ներդրման համար խորին շնորհակալություն են հայտնում ներքոնշյալ փորձագետներին՝

Արմեն Ղուկասյան	Ոստիկանության գնդապետ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շտաբի պետի տեղակալ
Ռուբեն Ղամբարյան	Ոստիկանության գնդապետ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ
Արթուր Ղամբարյան	Դատախազ, Հայաստանի Հանրապետության դատախազություն
Ռուստամ Մախմուդյան	Ռազմական եւ զինծառայողների հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական
Վահագն Գեւորգյան	Ավագ փորձագետ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հետխորհրդային ժամանակաշրջանը նպաստեց Հայաստանում մի շարք ժողովրդավարական գործընթացների ծավալմանը: 1991թ. Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ «ՀՀ») հռչակեց իր անկախությունը:¹ Որպես այդ գործընթացի տրամաբանական շարունակություն եւ հասարակական նոր կարգ սահմանելու օրակարգում առաջին եւ կարեւորագույն քայլը եղավ հանրաքվեի միջոցով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը (5 հուլիսի 1995թ.):² ՀՀ Սահմանադրությունը սահմանեց պետության սահմանադրական կարգը, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը, օրենքի գերակայությունը եւ բազմակուսակցական համակարգի ճանաչումը:³ 1995 թվականին ընդունված սահմանադրությամբ սահմանվեց ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան կառուցվածք եւ առանձին սահմանադրական դատարան (այսուհետ՝ «ՍԴ»), որն օժտված է սահմանադրական արդարադատություն իրականացնելու եւ օրենքների սահմանադրականության շուրջ ծագած վեճերի լուծման բացառիկ լիազորությամբ:⁴

Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ նաեւ միջազգային եւ տարածաշրջանային ժողովրդավարական հաստատությունների կազմում ինտեգրվելու գործընթացին: 1992թ. մարտին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Հ.46/227 որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը անդամակցեց Միավորված ազգերի կազմակերպությանը⁵ եւ ստանձնեց ՄԱԿ-ի կանոնադրության, ինչպես նաեւ համապատասխան իրավական փաստաթղթերի նկատմամբ պարտավորվածությունը:

Այդուհանդերձ, Եվրոպայի դուռը թակելու եւ վերջինիս ժողովրդավարական, իրավական ընտանիքի անդամը դառնալու Հայաստանի առաջին փորձերը սկսվեցին 1996 թվականին: 1996 թվականի մարտի 7-ին Հայաստանի Հանրապետությունը անդամակցելու նպատակով դիմեց Եվրախորհուրդ⁶ (այսուհետ՝ «ԵԽ»)՝ եւ 2001թ. հունվարի 25-ին դարձավ վերջինիս լիիրավ անդամը:⁷ Եվրախորհրդի շրջանակներում ստանձնած պարտավորությունների շարքում⁸ 2001 թվականին Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլոց, որդեգրեց Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների

¹Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավական նախաձեռնություն, Դատական համակարգի բարեփոխումների ինդեքս Հայաստանի Հանրապետության համար, Հատոր. III, էջ 5 (2008)

²Հասանելի է՝ <http://concourt.am/english/constitution/const1995.ht>

³ՀՀ Սահմանադրություն (13 հուլիսի 1995թ.)

⁴ՀՀ Սահմանադրության 91-93 հոդվածներ

⁵Հասանելի է՝ <http://www.un.am/?laid=1&com=module&module=menu&id=93>

⁶ՀՀ հայտը Եվրախորհրդին անդամակցելու համար, կարծիք # 221 (2000), Եվրախորհրդի պառլամենտական ասամբլեա. հասանելի է՝ [at http://www.coe.am/en/docs/pace/opinion_221.pdf](http://www.coe.am/en/docs/pace/opinion_221.pdf)

⁷Եվրախորհրդի հայաստանյան ներկայացուցչություն, Տեղեկատվական գրասենյակ. հասանելի է՝ http://www.coe.am/index.php?cat_id=35

⁸Տե՛ս անդ.տող.ծանոթ. 6

մասին եվրոպական կոնվենցիան⁹, իսկ 2005թ. հանրաքվեի միջոցով փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրությունում:¹⁰

Փոփոխված Սահմանադրությունն ուժի մեջ մտավ 2005թ. դեկտեմբերի 5-ին եւ անգնահատելի դեր ունեցավ Հայաստանի Հանրապետությունում օրենքի գերակայության խթանման հարցում: ՀՀ սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է երկրի սահմանադրական հիմքը եւ Հայաստանի Հանրապետությունը բնորոշում որպես *ժողովրդավարական, իրավական պետություն*:¹¹ Առաջին անգամ սահմանադրության մեջ որպես բարձրագույն արժեքներ ճանաչվեց մարդը, մարդկային արժանապատվությունը եւ մարդու իրավունքները:¹²

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով, իր հերթին սահմանվեց, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա: Անշուշտ, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Բացի այդ, Սահմանադրության 8.2 հոդվածով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են երկրի անվտանգությունը, պաշտպանությունը եւ տարածքային ամբողջականությունը, ինչպես նաեւ նրա սահմանների անձեռնմխելիությունը: Սակայն, զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն եւ գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

Սույն սահմանադրական դրույթները սահմանում են երկրում ժողովրդավարական հաշվետվողականության ընդհանուր սկզբունքները, իսկ վերջիններիս հիման վրա մշակվում են այլ օրենքներ եւ մեխանիզմներ: Սահմանադրությունն այն հիմքն է, որի հիման վրա ստեղծվում են տարբեր կառույցներ եւ մեխանիզմներ՝ նպատակաուղղված պետական մարմիններին հասարակության առջեւ հաշվետու պահելուն: Կառույցներից եւ մեխանիզմներից շատերն ունեն իրենց սեփական օրենքները, որոնցում սահմանված են վերջիններիս հիմնական սկզբունքները, հանձնարարականներն ու գործառույթները:

Ընդունված է համարել, որ հանրային անվտանգության պահպանման համար պատասխանատու՝ պետական իշխանության ամենատեսանելի դրսեւորումը ոստիկա

⁹Հասանելի է՝ <http://www.echr.coe.int/Library/annexes/CEDH1950ENG.pdf>

¹⁰ՀՀ Սահմանադրություն ընդունված 1995թ. եւ փոփոխված 2005թ. նոյեմբերի 27-ին, հասանելի է՝ <http://concourt.am/english/constitutions/index.htm>

¹¹ՀՀ Սահմանադրություն, Հոդված 1

¹²ՀՀ Սահմանադրություն, Հոդված 3

¹³Քելին Թարթի «Ժողովրդական ոստիկանության ուղեցույց-ձեռնարկ», ԵԱՀԿ 2008

նությունն է: Կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, ինչպես նաեւ գլոբալ անվտանգության ռիսկերի հետ կապված առկա ռժվարություններին առճակատվելիս ոստիկանությունը մշտապես պետք է առաջնորդվի ազգային եւ միջազգային իրավական պարտավորություններով եւ հարգանք ցուցաբերի մարդու իրավունքների նկատմամբ:¹³

Ինչպես ԵԱՀԿ Գլխավոր քարտուղարի ոստիկանության հարցերով ավագ խորհրդական Զեվին Զարթին է նշում «ոստիկանության ծառայողները կամրապնդեն պետության օրինավորությունը, եթե առօրյա աշխատանքում ապացուցեն, որ արձագանքում են հանրության կարիքներին եւ ակնկալիքներին, ինչպես նաեւ պետության կողմից սահմանված լիազորություններն օգտագործում են ի նպաստ ժողովրդի: Նշված նպատակներին հասնելու համար ոստիկանությունը պետք է իր գործունեությունն իրականացնի ներպետական եւ օրենքի կիրառման միջազգային չափորոշիչների համաձայն, պահպանի ծառայողական վարքագծի կանոնները եւ ցուցաբերի արհեստավարժություն»: Անշուշտ, ժողովրդավարական ոստիկանության պայմաններից մեկն այն է, որ ոստիկանությունը հաշվետու լինի ժողովրդի, պետության եւ օրենքի առջեւ, եւ, հետեւաբար, ոստիկանության գործունեությունը պետք է լինի մի շարք վերահսկող կառույցների վերահսկողության ներքո:¹⁴

Ավելորդ է ասել, որ հաշվետվողականությունը ժողովրդավարական ոստիկանության կենսական տարրերից մեկն է: Թե՛ ոստիկանության ծառայողներն առանձին վերցրած, թե՛ իրավապահ գործակալությունները պետք է հաշվետու լինեն կատարած գործողությունների համար: Եթե ոստիկանությունը ցանկանում է հասնել իր առջեւ դրված օրինական նպատակներին, ապա կարելու են հաշվետվողականության արդյունավետ ընթացակարգերը: Օրինականությունը վերաբերում է համապատասխանությանը օրենքին, ինչպես նաեւ օրենսդրական ակտերին եւ դատարանի որոշումների պահանջներին: Ոստիկանության գործունեության օրինավորությունը ենթադրում է, որ ոստիկանության վարքագիծը եւ՝ օրինական է, եւ՝ համահունչ հանրային ակնկալիքներին (Ազգային հետազոտությունների խորհուրդ, 2004թ.):¹⁵

Համաձայն ԱՄՆ-ի Արդարադատության ազգային ինստիտուտի՝ ի դեմս Սամուել Ուոլքերի կողմից մշակված կարծիքի եւ սահմանման՝ ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքի համաձայն ոստիկանությունը պետք է հաշվետու լինի իր գործողությունների համար: Հաշվետվողականությունը պետք է ընկալել հետեւյալ կտրվածքով՝ ինչ է անում ոստիկանությունը եւ ինչպես է կատարում իր գործառույթները: Ուոլքերը տարբերակում է ոստիկանական հաշվետվողականության երկու տեսակ՝

¹⁴Տե՛ս նույն տեղում

¹⁵Սամուել Ուոլքեր «Ոստիկանության հաշվետվողականությունը. Ներկա հիմնախնդիրներն ու ուսումնասիրության կարիքները», Արդարադատության ազգային ինստիտուտ, Ոստիկանության ուսումնասիրության պլանավորումը, էջ. 1, Վաշինգտոն, 2006թ. նոյեմբեր

գործակալության եւ անհատական մակարդակի: Համապատասխանաբար, «գործակալության մակարդակի հաշվետվողականությունը ներառում է իրավապահ գործակալությունների կատարողականը՝ կապված հանցավորությունների եւ անկարգությունների վերահսկման, ինչպես նաեւ հասարակությանը ծառայություններ մատուցելու, մինչդեռ անհատական մակարդակի հաշվետվողականությունը ներառում է ոստիկանության ծառայողների վարքագիծը՝ կապված քաղաքացիներին օրինական, հարգալից եւ հավասար վերաբերմունքի ցուցաբերման հետ»:¹⁶

Իր հերթին, այսպես կոչված «անհատական մակարդակի» հաշվետվողականությունը մեծապես ընդունված է բաժանել երկու խմբի՝ *Ներքին եւ արտաքին (շեշտադրումն ավելի շատ վերջինի վրա է)*: Ներքին հաշվետվողականությունը ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ծառայողական վարքագծի վերահսկումը, առօրյա ղեկավարումը, կատարողականի կանոնավոր գնահատումները, մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի քննությունը եւ այլն:

Ինչ վերաբերում է արտաքին հաշվետվողականությանը, այն, առավել ընդհանուր հասկացությամբ ներկայացնելիս, կստացվի, որ վերջինս ապահովում է ոստիկանության ծառայողների նկատմամբ վերահսկողությունը ժողովրդավարական այնպիսի մարմինների կողմից, ինչպիսիք են Ազգային ժողովը, Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների նկատմամբ քրեական եւ քաղաքացիական գործերի հարուցումը, վերահսկումը քաղաքացիական հասարակության՝ ներառյալ ՉԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների եւ այլոց կողմից:

Ամփոփելով նշենք, որ այն ներառում է ոստիկանության ենթակայությունը մի կողմից ժողովրդավարական սկզբունքներով ընտրված մարմիններին եւ պաշտոնատար անձանց, մյուս կողմից՝ հանրային վերահսկմանը՝ հանրությանը ներգրավելով ոստիկանության աշխատանքի ժողովրդավարական վերահսկման գործընթացում: Վերջինս հիմնականում իրագործվում է քաղաքացիական հասարակության այնպիսի ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են ազատ մամուլն ու ՀԿ-ները: Պատահական չէ, որ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության գրավականն են հանդիսանում հանրային մարմինների եւ այսպես կոչված «3-րդ սեկտորի» (մամուլ, ՀԿ-ներ) կայունությունն ու արդյունավետությունը, որի ներքո երրորդ սեկտորը ունենում է նախաձեռնողական դեր:¹⁷

Միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում, ինչպես նշվեց ավելի վաղ, 1992 թվականին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության ան-

¹⁶Տե՛ս նույն տեղում, էջ. 1-2

¹⁷Առավել մանրամասն այս հարցի շուրջ կարող եք ծանոթանալ «Իրավապահ մարմինների քաղաքացիական վերահսկողությունը Ուկրաինայում. դժվարություններ եւ հեռանկարներ» փաստաթղթում, որը հասանելի է՝ www.caei.com.ar

դամ եւ վավերացրեց ու ստորագրեց ՄԱԿ-ի մի շարք իրավական փաստաթղթեր, ներառյալ ՄԱԿ-ի կանոնադրությունը, ՄԱԿ-ի «խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» կոնվենցիան (1984), Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիան (1966), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիան (1979) եւ այլն: Հայաստանի նկատմամբ կիրառվող այլ միջազգային փաստաթղթերի շարքին են դասվում նաեւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ՄԱԿ-ի Իրավապահ ծառայողների վարքագծի կոդեքսը, Իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման եւ զենքի կիրառման հիմնարար սկզբունքները:

ՄԱԿ-ի Իրավապահ մարմինների ծառայողների վարքագծի կոդեքսը սահմանում է, որ ոստիկանության ծառայողները պարտավոր են գործադրել օրենքով սահմանված լիազորությունները՝ հասարակությանը ծառայելով պատասխանատվության մեծ զգացումով եւ բոլոր անձանց պաշտպանելով անօրեն գործողություններից:¹⁸ Ոստիկանության ծառայողները պարտավոր են, իրենց գործառնություններն իրականացնելիս¹⁹ հարգել մարդու իրավունքները եւ արժանապատվությունը. նրանց արգելվում է մարդկանց երբեւէ ենթարկել խոշտանգման:²⁰ Հատկանշական է նաեւ, որ իրավապահ մարմինները չպետք է ցուցաբերեն կաշառակերության որեւէ դրսեւորում:²¹

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը Եվրախորհրդի անդամ է. այն ստորագրել եւ վավերացրել է Մարդու իրավունքի եվրոպական դատարանի կոնվենցիան իր համապատասխան արձանագրություններով: Համապատասխանաբար, Եվրախորհրդի շրջանակներում գործող օրենսդրությունը կարող է նույնպես ներառել պարտավորություններ Հայաստանի համար: Մեր զեկույցի նպատակներից եւ ժողովրդավարական ոստիկանության միջազգային չափորոշիչներից ելնելով՝ հետաքրքիր կլինի հաջաք գցել Ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսի վրա:

Ելնելով ոստիկանական համակարգի համընդհանուր նպատակների, կատարողականի եւ հաշվետվողականության շուրջ համաեվրոպական սկզբունքների եւ ուղեցույցների մշակման անհրաժեշտությունից՝ 2001 թվականին Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն որդեգրեց Ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսը²² եւ իր անդամ պետություններին առաջարկեց ներպետական օրենսդրությունում եւ պրակտիկայում

¹⁸Իրավապահ մարմինների ծառայողների վարքագծի կոդեքս, ԳԱ Որոշում 34/169, Հոդ.1, 17 դեկտեմբերի, 1979թ.

¹⁹Տե՛ս նույն տեղում, Հոդված 2

²⁰Տե՛ս նույն տեղում, Հոդված 5

²¹Տե՛ս նույն տեղում, Հոդված 7

²²Ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսն ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից, Երաշխավորություն 10, (2001), 765-րդ նիստ, 19 սեպտեմբերի, 2001թ.

առաջնորդվել Եվրոպական կոդեքսում սահմանված չափորոշիչներով: Եվրոպական կոդեքսում հասցեագրված են այնպիսի սահմանումներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարական ոստիկանության նպատակները, ոստիկանության իրավական հիմքը օրենքի գերակայության ներքո, ոստիկանությունը սահմանված է որպես հասարակական մարմին, որը պետք է ստեղծվի համաձայն օրենքի, հստակ տարբերակում պետք է լինի ոստիկանության եւ քրեական դատավարության համակարգերի միջեւ: Կոդեքսում ներկայացված են ոստիկանության կազմակերպական կառուցվածքը, ոստիկանության ծառայողների իրավունքները, ոստիկանական միջամտությունների ուղենիշները, ինչպես նաեւ հատուկ բաժին է հատկացված ոստիկանության հաշվետվողականությանն ու վերահսկողության ինստիտուտին:

Ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսում հստակ տարանջատված է ոստիկանության ներքին եւ արտաքին հաշվետվողականությունը: Կոդեքսի 20-րդ պարբերությունում ներկայացված է ոստիկանության ներքին հաշվետվողականության անհրաժեշտությունը, մասնավորապես *«ոստիկանական կազմակերպությունը պետք է ունենա բավարար միջոցներ՝ ապահովելու ոստիկանական անձնակազմի միասնականությունն ու համապատասխան կատարողականը, մասնավորապես՝ երաշխավորելու հարգանքը անհատի հիմնարար իրավունքների եւ ազատությունների նկատմամբ, ինչպես ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում»*:²³

Ինչ վերաբերում է արտաքին հաշվետվողականությանը, համաձայն ժողովրդավարական ոստիկանության սկզբունքների, ոստիկանությունը պետք է հաշվետու լինի քաղաքացիների, ոստիկանության վերադաս մարմինների, պետության եւ օրենքի առջեւ: Պետության կողմից ոստիկանության վերահսկումը պետք է բաժանված լինի օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների: Պետական իշխանություններն, իրենց հերթին, պարտավոր են ապահովել արդյունավետ եւ անկողմնակալ ընթացակարգեր ոստիկանության աշխատանքի դեմ ուղղված բողոքներին պատշաճ ձեւով ընթացք տալու համար՝ դրանով իսկ խթանելով հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետությանը:²⁴

Սույն կոդեքսում ամրագրված երաշխավորությունները եւ դրույթները հետագայում ներմուծվել եւ իրականացվել են «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագրի մասին» ՀՀ օրենքում, որը կքննարկվի սույն զեկույցի շրջանակներում:

²³Տե՛ս նույն տեղում, 20-րդ պարբերություն

²⁴Տե՛ս նույն տեղում, 59-63-րդ պարբերություններ, VI-րդ բաժին

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Նախքան ոստիկանության վերահսկումն իրականացնելու, ինչպես նաև հասարակության եւ իշխանությունների առջեւ պատասխանատվության ենթարկելու լիազորություններ ունեցող կառավարության տարբեր ճյուղերին անդրադառնալը՝ անհրաժեշտ է հասկանալ ոստիկանության տեղը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, վերջինիս հիմնական գործառնությունները, նպատակները եւ սկզբունքները, ինչպես նաև ներքին կառուցվածքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ գլուխը սահմանում է գործադիր իշխանության՝ կառավարության սահմանադրական հիմքը եւ մատնանշում վերջինիս լիազորությունները: Սահմանադրության մեկ այլ՝ 85-րդ հոդվածի համաձայն կառավարությունն է մշակում եւ իրականացնում Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Սակայն, կառավարությունը, ըստ Սահմանադրության, պատասխանատու է երկրի պաշտպանության եւ ազգային անվտանգության քաղաքականության իրականացման համար:²⁵ Կառավարությունը խնդրո առարկա քաղաքականությունը իրագործում է պետական համապատասխան գործակալությունների միջոցով: Դրանց շարքում է ոստիկանությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինը, որը պատասխանատու է հասարակական կարգի եւ անվտանգության պահպանման, ինչպես նաև հանցագործությունների նախականիման, բացահայտման եւ այլ իրավախախտումների դեմ պայքարի ոլորտներում պետական քաղաքականության մշակման եւ իրագործման համար:²⁶

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ոստիկանությունը, որպես առանձին մարմին, ստեղծվել է ոչ շատ վաղուց: Մինչեւ 2001 թվականը ոստիկանությունը կազմում էր ՀՀ Ներքին գործերի նախարարության մի մասը: 2001թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո նախարարությունը վերակազմակերպվեց ՀՀ ոստիկանության: Ապրիլ ամսվանից ի վեր ոստիկանությունը de jure ստեղծված էր, սակայն ուժի մեջ մտավ միայն 2002թ. հունվարից, երբ Ներքին գործերի նախարարությունը վերածվեց ոստիկանության: Համապատասխանաբար, ավագ գործադիր պաշտոնյաները դարձան ոստիկանության ղեկավարներ, իսկ հետագայում, ոստիկանության ներքին հրամանի հիման վրա, Ներքին գործերի նախարարության աշխատակիցները վերահայտարարվեցին որպես ոստիկանության

²⁵Տե՛ս անդ.տող.ծանոթ. 10, հոդված 89.6

²⁶«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, 16 ապրիլի 2001թ., տեԲս, ի թիվս այլոց, կառավարության որոշումը՝ կառավարությանը կից ՀՀ ոստիկանության օրենսդրական ակտի վերաբերյալ, հոդված 1.1, 29.04.2004

ծառայողներ: Հարկ է նշել, որ ներկայումս ոստիկանության կառուցվածքը եւ ստորաբաժանումների թիվը սահմանվում է կառավարության կողմից, մինչդեռ զուտ ներքին հարցերը, օրինակ՝ աշխատակիցների թիվը յուրաքանչյուր ստորաբաժանումում որոշում է ոստիկանությունն ինքը:

Քրեակատարողական հիմնարկները, ինչպես նաեւ հրշեջ ծառայությունը դուրս են բերվել ՀՀ ոստիկանության կառուցվածքից եւ հանձնվել համապատասխանաբար Արդարադատության եւ Արտակարգ իրավիճակների նախարարությունների ենթակայությանը: Ներքին գործերի նախարարության՝ ոստիկանության վերածվելու պատճառը անկողմնակալ եւ չեզոք ոստիկանություն ունենալն էր: Նախարարական դիրքորոշումը քաղաքական է եւ կրում է քաղաքական բարդույթներ, մինչդեռ ոստիկանությունը, որպես այդպիսին, պետք է պահպանի քաղաքական չեզոքություն: Ոստիկանությունը կարծում է, որ ապագայում, ժողովրդավարական զարգացումների լույսի ներքո, չի բացառվում, որ կարող է առաջանալ Ներքին գործերի նախարարության ստեղծման անհրաժեշտություն, որը պատասխանատու կլինի այս ոլորտի քաղաքականության մշակման եւ իրականացման համար. այն բաղկացած կլինի ոչ միայն ոստիկանությունից, այլ նաեւ, օրինակ՝ միգրացիոն գործակալությունից, միգրացիոն տարածքային կառավարումից: Ներկայումս, սակայն, ոստիկանական կարիքները հասցեագրելու լավագույն ձեւը այն որպես առանձին, քաղաքականապես չեզոք մարմին պահելն է:²⁷

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում, ի թիվս այլ դրույթների, սահմանված են ոստիկանության առջեւ ծառացած խնդիրները, այն սկզբունքները, որոնց հիման վրա ոստիկանությունը կյանքի է կոչում իր գործողությունները: Օրենքում սահմանված են նաեւ ոստիկանության իրավունքներն ու պարտականությունները:

Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ ոստիկանության առանցքային խնդիրներին են՝

- մարդու անվտանգությունը,
- հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականումը, կանխումը եւ խափանումը,
- հանցագործությունների հայտնաբերումը եւ բացահայտումը, քրեական գործերով նախնական քնությունը,
- հասարակական կարգի պահպանությունը եւ հասարակական անվտանգությունը,
- սեփականության բոլոր ձեւերի պաշտպանությունը,
- ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս օգնություն ցույց տալը:²⁸

²⁷Հարցազրույց ՀՀ ոստիկանության շտաբում, 12 նոյեմբերի 2009թ.

²⁸«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, Հոդված 2

Անշուշտ, օրենքը սահմանում է ժողովրդավարական ոստիկանության հիմնարար սկզբունքները, այն, մասնավորապես, պարտավորեցնում է ոստիկանությանը առաջնորդվել օրենքի գերակայության, մարդու իրավունքների, մարդկային արժանապատվության եւ ազատությունների նկատմամբ հարգանքի, մարդասիրության եւ թափանցիկության սկզբունքներով:²⁹ Օրենքում մանրամասն դրույթներ են սահմանված ոստիկանության ծառայողների իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ: Օրենքում հասցեագրված՝ ոստիկանության պարտականությունները ներկայացված են տարբեր տեսանկյուններից. առանձնացված են ի պաշտոնե պարտականությունները եւ այն հանձնառությունները, որոնք կապված են անհատի անվտանգության, իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, հանցագործությունների եւ այլ անօրինական գործողությունների նախականիման եւ վերջիններիս դեմ պայքարի, հասարակական անվտանգության, զենքի պահպանումն ու կիրառումը վերահսկելու, քաղաքացիների եւ կազմակերպությունների սեփականությունը պահպանելու, հասարակական արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու, հատուկ հրամանի ներքո պարտադիր գործադիր միջոցառումներ իրագործելու, ինչպես նաեւ անձնագրային եւ վիզաների կարգը ապահովելու հետ:

Ոստիկանությանը օրենքով սահմանվում են իրավունքներ եւ պարտականություններ, ինչպես նաեւ ապահովվում է, որ վերջինիս գործողությունները իրագործվեն քրեական արդարադատության համակարգի շրջանակներում՝ օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա: Տվյալ դեպքում առկա է մետաղադրամի երկու կողմը՝ ոստիկանությանը մի կողմից կարող է օրենքի թույլատրելի շրջանակներում միջամտել քաղաքացիների իրավունքներին եւ ազատություններին՝ պաշտպանելով անմեղ մարդկանց, մյուս կողմից՝ հաշվետու է հասարակության առջեւ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում սահմանված են ոստիկանության հաշվետվողականության մասին դրույթները: Մասնավորապես, օրենքի VIII-րդ գլուխը վերնագրված է «Ոստիկանության գործունեության հսկողությունն ու վերահսկողությունը. ոստիկանության ծառայողի պատասխանատվությունը»: Սույն գլխում թվարկված են այն մարմինները, որոնք օժտված են ոստիկանության գործունեության վերահսկման լիազորություններով: 42-րդ հոդվածում սահմանված է՝

«Ոստիկանության գործունեության նկատմամբ իրենց լիազորությունների սահմաններում վերահսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված դեպքերում ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Ոստիկանությունում ներգերատեսչական հսկողությունն

²⁹Տե՛ս նույն տեղում, հոդված 3

իրականացվում է ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարի սահմանած կարգով: Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Պետական այլ մարմիններն ու կազմակերպություններն իրավասու չեն միջամտելու ոստիկանության օպերատիվ-հետախուզական եւ քրեադատավարական գործունեությանը, ինչպես նաեւ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությանը»:³⁰

Ամփոփելով՝ նշենք, որ ոստիկանության գործունեության արտաքին վերահսկումը իրականացվում է կառավարության եւ Ազգային ժողովի կողմից, մինչդեռ ներգերատեսչական վերահսկողությունը՝ ՀՀ ոստիկանապետի կողմից:

Չնայած համապատասխան օրենքը չի նախատեսում դրույթներ դատական վերահսկման վերաբերյալ, այդուհանդերձ դատական իշխանությունները նույնպես վերահսկում են ոստիկանությանը՝ պետական այլ մարմինների, ինչպես նաեւ հասարակության անդամների կողմից նախաձեռնած քաղաքացիական եւ քրեական դատավարությունների միջոցով:³¹

Ոստիկանական համակարգը եւ վերջինիս ղեկավարության գործունեությունը կանոնակարգվում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ օրենսդրական ակտով: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում պարզաբանվում է, որ ոստիկանության համակարգը բաղկացած է ոստիկանությունից, ոստիկանության զորքերից եւ պետական ոչ առևտրային կազմակերպություններից: Ոստիկանության կառուցվածքը եւ թվաքանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարի ներկայացմամբ: Ոստիկանության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարը: Հրամանատարական բարձրագույն շրջան պատկանում է ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարին. վերջինս էլ իրականացնում է համակարգի կենտրոնացված ղեկավարումը: Ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ:³² Ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ եւ մի քանի տեղակալներ, ովքեր նշանակվում են Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից՝ ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարի

³⁰ Չնայած «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի իրավական դրույթների համաձայն Ազգային ժողովն օժտված է ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորություններով, ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, այդուհանդերձ, օրենքում սահմանված չեն այն դեպքերը, թե երբ կարող է Ազգային ժողովն իրականացնել վերահսկողություն, բացառությամբ բյուջեի վերահսկողությունը:

³¹ Ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսին կից Բացատրական հուշագիր, Նկատառում 60-րդ պարբերությանը, էջ.68, Եվրախորհուրդ, 2001թ.

³² Ոստիկանության կանոնադրություն, Հոդված 3

ներկայացմամբ: Ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարը հաշվետու է Հայաստանի Հանրապետության Նախագահի, կառավարության եւ վարչապետի առջեւ:³³

Ոստիկանական աշխատանքը համարվում է ծառայության հատուկ տեսակ, որը կանոնակարգվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով:³⁴ Նախ եւ առաջ նշենք, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում սահմանված է պետական ծառայության հասկացությունը եւ ուրվագծված, որ ոստիկանական ծառայությունը պետական ծառայություն է:³⁵ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում սահմանված է, որ ծառայությունը ոստիկանությունում պետական ծառայության հատուկ տեսակ է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն են միայն իրավասու ծառայել ոստիկանությունում:

Ներկայումս ոստիկանության համակարգում առկա են երկու տիպի ծառայողներ՝ ոստիկանության ծառայողներ եւ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք: 2007թ. Ազգային ժողովն ընդունեց «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2008թ.՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, ինչով, պաշտպանության նախարարությունից հետո, հնարավոր դարձավ ՀՀ ոստիկանությունում նույնպես ներդնել քաղաքացիական հատուկ ծառայությունը: ՀՀ ոստիկանության կողմից արդեն իսկ մշակվել են համապատասխան իրավական ակտեր՝ 2010թ. համակարգում այն ներդնելու համար: Քաղաքացիական հատուկ ծառայողները ուղղակիորեն ներգրավված չեն լինելու ոստիկանական ծառայությունների մատուցման գործընթացում. վերջիններս օժանդակ դեր են կատարելու ոստիկանության համար՝ մատուցելով որոշակի ծառայություններ, օրինակ՝ գնումների մասնագետ, ֆինանսների մասնագետ, տեղեկատվության մասնագետ եւ այլն:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում նույնպես սահմանված են ոստիկանական ծառայության գերիշխող սկզբունքները՝ օրենքի գերակայությունը, հարգանքը մարդու իրավունքների, ազատությունների եւ արժանապատվության նկատմամբ, թափանցիկությունն ու մարդասիրությունը:³⁶

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը տարածքայնորեն բաժանված է կենտրոնական ապարատի, 11 տարածքային վարչությունների (10 մարզային եւ մեկը Երեւան քաղաքի համար), որոնք էլ իրենց հերթին տարրաբաժանված են 52 ոստիկանական բաժինների:

³³Տե՛ս նույն տեղում

³⁴«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք, 03 հունիսի 2002թ.

³⁵«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 04 դեկտեմբերի 2001թ.

³⁶Տե՛ս նույն տեղում , 3-րդ ված 2.2

Ոստիկանության կազմի մեջ են մտնում նաեւ Ոստիկանության ուսումնական կենտրոնը, Ոստիկանության ակադեմիան, ինչպես նաեւ այլ օժանդակ կազմակերպություններ: Ոստիկանության հրամանատարական կառուցվածքի գագաթին ոստիկանապետն է՝ իր աշխատակազմով, տեղակալներով եւ կենտրոնական ապարատի մասնագիտացված ճյուղային ծառայություններով:

Կենտրոնական ապարատի ստորաբաժանումներից են՝ Շտաբը, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը, Զննչական գլխավոր վարչությունը եւ Զրեական հետախուզության գլխավոր վարչությունը: Այլ կարեւոր վարչություններից են՝ Հասարակայնության հետ կապերի վարչությունը, Կադրերի վարչությունը, Տեղեկատվական կենտրոնը, Ֆինանսատնտեսագիտական վարչությունը, Իրավական ապահովման վարչությունը, Անձնագրերի եւ վիզաների վարչությունը, Հասարակական կարգի ապահովման վարչությունը, Ճանապարհային ոստիկանությունը, Բժշկական վարչությունը, Պետական պահպանության վարչությունը, Ներքին անվտանգության վարչությունը, Փորձաքրեագիտական վարչությունը, ինչպես նաեւ Կապի բաժինը, Օպերատիվ-տեխնիկական բաժինը:³⁷ Ոստիկանության առավել մանրամասն կառուցվածքը ներկայացված է սույն զեկույցին կից՝ Հավելված Ա-ում:

Ինչ վերաբերում է ոստիկանության ֆինանսավորմանը եւ նյութատեխնիկական ապահովմանը, այն ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին եւ այն միջոցների հաշվին, որոնք ստացվում են այն կազմակերպություններից կամ քաղաքացիներից, որոնց համար պայմանագրային հիմունքներով մատուցվում է ծառայություն:³⁸

³⁷Հասանելի է՝ <http://www.armeniaemb.org/DiscoverArmenia/armpob.htm>

³⁸«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2001թ. եւ փոփոխված 21.02.07թ.

ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ համապատասխան օրենսդրական նորմերի ու ակտերի ուղղակի պահանջն է՝ իրավապահ մարմինների ներքին վերահսկողությունը, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների կողմից մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի եւ օրինականության խախտման դեպքերով ծառայողական օբյեկտիվ քննությունը ոստիկանական համակարգի ներսում: Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության ծառայողների կարգապահության եւ օրինավորության ներքին հսկողության եւ վերահսկողության խնդիրը տարբեր ժամանակներում տարաբնույթ ձեւերով է իրականացվել:

Ոստիկանական կառույցի ներքին մոնիթորինգն ու հսկողությունը սկսվում է ամենացածր մակարդակից. ոստիկանության բաժինների պետերը վերահսկում են իրենց բաժինների աշխատակիցներին, նույնը վերաբերում է մարզային վարչությունների պետերին, իսկ կենտրոնական ապարատը՝ վերահսկում է ողջ ոստիկանությանը: Կենտրոնական ապարատի յուրաքանչյուր վարչություն, գործառնական իրավասության շրջանակներում, ստուգումներ է կատարում եւ վերահսկում ոստիկանության տարածքային բաժինները: Ոստիկանության կենտրոնական ապարատում առկա են երկու մասնագիտացված գործակալություններ, որոնք օժտված են մոնիթորինգ կատարելու լիազորություններով: Դրանք են՝ Ներքին անվտանգության վարչությունը եւ Շտաբը:³⁹ Վերջինս վերահսկում է, որպեսզի ոստիկանության ծառայողները ճշգրտորեն իրագործեն ոստիկանապետի ցուցումներն եւ հրամանները: Ոստիկանության շտաբը վերահսկիչ գործառնային է կատարում ոստիկանության վերլուծական աշխատանքների, ինչպես նաեւ ոստիկանության պլանավորման միջոցառումների նկատմամբ: Շտաբն ունի ենթաբաժին, որն իրականացնում է ստուգայցեր:⁴⁰

Մի շարք զարգացումներ հանգեցրին մասնագիտացված գործակալության ստեղծմանը, որը կգբաղվեր ոստիկանության ներսում մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների եւ կարգապահական տույժերի հարցերով: 2003 թվականին ստեղծվեց Ներքին անվտանգության վարչությունը՝ իրագործելու «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ եւ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով սահմանված պահանջները: Ներքին անվտանգության վարչությունը ոստիկանության կենտրոնական ապարատի անկախ կառուցվածքային ստորաբաժանում է եւ կոչված է ներքին անվտանգության միջոցառումներ իրագործելու ոստիկանության ներսում: Վարչության հիմնական գործառնայիններն են՝ ուժեղացնել կարգապահությունը ոստիկանության անձնակազմի շրջանում, ուսումնասիրել վերջիններիս մասնա

³⁹Շտաբը ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի գլխավոր վարչություններից մեկն է, որի կազմի մեջ են մի շարք բաժիններ, ինչպիսիք են՝ Վերլուծական, Միջազգային համագործակցության, Տեսչական եւ Հերթապահ:

⁴⁰Հարցազրույց ՀՀ ոստիկանության շտաբում, 12 նոյեմբերի 2009թ.

գիտական եւ բարոյական ոչ պատշաճ վարքագիծը, նախագգուշացնել կարգապահական խախտումները, բացահայտել ոչ պատշաճ վարքագծի պատճառներն ու արմատները, երաշխավորել ոստիկանության ծառայողի իրավունքների պաշտպանությունը, ուսումնասիրել ոչ պատշաճ վարքագծի դրսեւորման բոլոր հանգամանքները օբյեկտիվ եւ ժամանակին, կազմակերպել եւ իրականացնել միջոցառումներ ուղղված ոստիկանության ներսում ներքին անվտանգության ապահովմանը, ինչպես նաեւ մշակել եւ նախագծել իրավանորմատիվային փաստաթղթեր, որոնց միջոցով կկարգավորվեն կառավարման հարցերը: Օրինակ, Ներքին անվտանգության վարչությունը կարող է մանրամասն ուսումնասիրել ծառայողական քննության անցկացման պատճառները եւ պարզել, թե արդյոք ստորադասն է վատ կատարում վերադասի հրամանները, թե՞ վերադասն է պակաս հսկողություն իրականացնում եւ ղեկավարում ստորադասին, եւ վերլուծության արդյունքում առաջարկել միջոցներ եւ մեխանիզմներ խնդիրը լուծելու ուղղությամբ:

Ներքին անվտանգության վարչությունը բաղկացած է երեք բաժիններից՝

- Ծառայողական քննության բաժին
- Օպերատիվ բաժին
- Վերլուծությունների եւ հաշվետվությունների բաժին

Ներքին անվտանգության վարչության Ծառայողական քննության բաժինը զբաղվում է ոստիկանության աշխատակիցների դեմ ուղղված՝ քաղաքացիներից ստացված բողոքներով ու դիմումներով, ինչպես նաեւ հետաքննում է ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված կարգապահական եւ բարոյական խախտումները:

Ինչ վերաբերում է օպերատիվ բաժնին, վերջինիս հիմնական գործառույթը հետախուզական եւ օպերատիվ միջոցառումների իրականացումն է՝ ուղղված ոստիկանության ծառայողների կողմից կատարված իրավախախտումների նախականիմանը, հայտնաբերմանը եւ բացահայտմանը, ոստիկանության ծառայողների կողմից՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների եւ ազատությունների հետ կապված իրավախախտումների հայտնաբերմանը եւ ժամանակին բացահայտմանը, այնպիսի իրավիճակների հայտնաբերմանը, բացահայտմանն ու հետաքննմանը, երբ ոստիկանության աշխատակիցները խոչընդոտում են իրավապահ եւ քննչական մարմինների կողմից սահմանված օրինական հանձնարարականների իրագործմանը:

Իր ստեղծման առաջին իսկ օրվանից օպերատիվ բաժնի աշխատակիցները իրականացրել են ոստիկանության անձնակազմի նպատակային եւ անսպասելի ստուգայցեր եւ ստուգումներ:

Վերլուծությունների եւ հաշվետվությունների բաժինը «տեղեկատվական բանկ» է՝ ոստիկանության ներքին կառավարման համար: Բաժնում հավաքագրվում եւ վերլուծ-

վում է ոստիկանության ծառայողների մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի եւ կարգապահական խախտումների թիվն ու տեսակը, ամփոփվում վիճակագրությունը եւ առաջարկություններ կատարվում իրականացվելիք անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաեւ ուսումնասիրվում է կարգապահության եւ օրինականության կարգավիճակը ոստիկանական համակարգի տարբեր բաժիններում, վարչություններում եւ ստորաբաժանումներում:

Ոստիկանական գործունեության ամենակարեւոր ուղղություններից մեկը ոստիկանության մասին օրենսդրության բարեփոխումն ու բարելավումն է: Այս կապակցությամբ հատուկ ուշադրության է արժանի «Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը:

Ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսում ամրագրված՝ Եվրախորհրդի երաշխավորությունները բավարարելու, ինչպես նաեւ ոստիկանության անձնակազմի շրջանում արհեստավարժություն եւ ազգային մակարդակով հանցավորությունների դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ ապահովելու նպատակով՝ 2005թ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ընդունել է օրենք, որով կարգավորվում են ոստիկանության ծառայողների կարգապահությունը, ոստիկանական էթիկան, կարգապահական միջոցառումները եւ ոստիկանության ծառայողի կողմից ցուցաբերած մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի ներքին հետեւանքները, ծառայողական քննություններ անցկացնելու ընթացակարգը, պատասխանատվությունը օրենքի պահանջներին նրանց վարքագիծը չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների շրջանում ծառայողական կարգապահությունը բարձրացնելու հետ կապված այլ հարցեր:⁴¹

«Ոստիկանության կարգապահական կանոնագրքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ծառայողական կարգապահությունը ոստիկանությունում ոստիկանության ծառայողների կողմից Հայաստանի Հանրապետության օրենքներով, նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պարտականությունների խստիվ եւ ճշգրիտ պահպանումն է, կատարումը եւ իրավագործությունների իրականացումը: Ծառայողական կարգապահությունը ոստիկանությունում հիմնվում է ոստիկանության յուրաքանչյուր ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման եւ էթիկայի կանոնների պահպանման համար անձնական պատասխանատվության գիտակցման, ինչպես նաեւ իր ղեկավարների լիազորությունների շրջանակներում տված հրամանների ճիշտ եւ ժամանակին կատարման վրա: Իր հերթին, ղեկավարը, պետք է օրինակ ծառայի իր ենթակաների համար՝ միշտ հարգելով վերջիններիս իրավունքներն ու արժանապատվությունը, խրախուսման, համոզման եւ հարկադրանքի միջոցների զուգորդմամբ, ղեկավարը հատուկ ուշադրություն պետք է դարձնի ենթա-

⁴¹«Ոստիկանության կարգապահական կանոնագրքի մասին» ՀՀ օրենք, 28.05.2005թ.

կաների անհատական հատկանիշների ուսումնասիրմանը, ժամանակին հայտնաբերի ենթակաների կատարած կարգապահական խախտումների պատճառները, ձեռնարկի կանխարգելիչ միջոցառումներ:

Խնդրո առարկա օրենքում հատուկ բաժին է նվիրված ոստիկանության ծառայողի էթիկայի նորմերին: Օրենքում, մասնավորապես, սահմանվում է, որ ոստիկանության ծառայողը պետք է հարգի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, ժողովրդի սովորույթներն ու ավանդույթները, ձեռնպահ մնա քաղաքական որեւէ կուսակցությանը սատարելուն եւ գրավի քաղաքականապես չեզոք դիրք, ցանկացած իրավիճակում պահպանի անձնական արժանապատվությունը, իրազեկ լինի եւ հարգի մարդու իրավունքները, ձեռնպահ մնա ցանկացած տեսակի գործունեության մեջ ներգրավվելուց, ինչը կարող է ազդեցություն ունենալ իր անկախության եւ անկողմնակալության վրա, հանրային եւ պետական շահերը վեր դասել սեփական շահերից, չհարաշահել պաշտոնը եւ այլն: Էթիկայի նորմերը պարտադիր են ոստիկանության ծառայողների համար՝ թե՛ մասնագիտական, թե՛ անձնական ոլորտներում: Էթիկայի նորմերի մի շարք խախտումներ կարող են հանգեցնել կարգապահական տույժերի:⁴²

Մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի եւ կարգապահական խախտումների բացահայտման նպատակով ոստիկանական բոլոր վարչությունների պետերը իրավասու են անցկացնելու ծառայողական քննություն: Ծառայողական քննության ժամանակ ոստիկանության բոլոր ծառայողները, անկախ կոչումից եւ պաշտոնից, հավասար են օրենքի առջեւ:

«Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ոստիկանության ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն կատարելու հիմք են հանդիսանում ոստիկանության ծառայողների մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների վերաբերյալ քաղաքացիներից ստացված բողոքներն ու գրավոր դիմումները, ինչպես նաեւ զանգվածային լրատվամիջոցների կողմից ստացված հաղորդումները:

Բացի այդ, ծառայողական քննություն կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի, մարդու իրավունքների պաշտպանի, պետական պաշտոնատար անձի, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դատախազների կողմից ՀՀ ոստիկանություն ուղարկված հաղորդումների հիման վրա: Ծառայողական քննություն կարող է սկսվել նաեւ այն դեպքում, երբ ոստիկանության վարչության պետը կամ համապատասխան տեղակալները ոստիկանության ծառայողի մոտ՝ աշխատանքային պարտականությունները կատարելիս ուղղակիորեն բացահայտում են մասնագիտական ոչ պատշաճ վարքագիծ:

⁴²Տե՛ս նույն տեղում, առավել մանրամասն՝ Հոդված 10-ը

Սովորաբար ծառայողական քննությունը իրականացվում է հնարավոր սեղմ ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան քննության նշանակումից սկսած՝ 30 օրվա ընթացքում: Ծառայողական քննության արդյունքում ոստիկանության ծառայողները կարող են ենթարկվել կարգապահական տույժերի: Տույժերը կարող են ներառել՝ նկատողությունը, խիստ նկատողությունը, պաշտոնային դրույքաչափի իջեցումը, զգուշացումը պաշտոնին ոչ լիովին համապատասխանելու մասին, պաշտոնի իջեցումը մեկ աստիճանով, կոչման իջեցումը մեկ աստիճանով, ոստիկանությունից ազատումը:

Սովորաբար ծառայողական քննությունը նշանակվում է այն պաշտոնատար անձի կողմից, որն իրավասու է որոշում կայացնել կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգապահական տույժեր կիրառելու գործառույթն իրականացնում է ՀՀ ոստիկանապետը, սակայն նա իր լիազորությունների մի մասը համապատասխան հրամանով պատվիրակել է տեղակալներին, վարչությունների եւ ինքնուրույն բաժինների պետերին. ծառայողական քննություններ կարող են նախաձեռնվել ոստիկանության մարզային վարչությունների պետերի կողմից: Ընդհանուր առմամբ, այնպիսի տույժեր, ինչպիսիք են՝ ոստիկանության ծառայողի կոչման կամ պաշտոնի իջեցումը կամ ոստիկանությունից ազատումը, կատարվում է միայն ոստիկանապետի կողմից: Եթե ոստիկանության ծառայողը ազատվում է ոստիկանությունից, ապա բոլոր փաստաթղթերը ենթակա են իրավական ապահովման վարչության կողմից ուսումնասիրման՝ ապահովելու որոշման հիմնավորվածությունը եւ օրինականությունը:

Եթե ոստիկանության ծառայողի մասնագիտական ոչ պատշաճ վարքագծում առկա են նաեւ քրեական օրենսգրքով նախատեսված արարքներ, ապա ծառայողական քննություն անցկացնող մարմինը կարող է երկարաձգել ծառայողական քննությունը եւ նյութերն ուղարկել հատուկ քննչական ծառայություն⁴³ քրեական հետաքննություն սկսելու եւ բացահայտելու, թե արդյոք տվյալ անձը հանցանք գործել է, թե ոչ: Ծառայողական քննություն իրականացնող մարմինը կարող է կամ սպասել դատախազի որոշմանը կամ անցկացնել ծառայողական քննությունն անմիջապես:

«Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձը, որը պատասխանատու է ոստիկանության գլխավոր, ավագ եւ միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողին՝ մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի դրսեւորման կամ էթիկայի նորմերը խախտելու համար կարգապահական տույժի ենթարկման համար, իրավունք ունի գործին առնչվող նյութերն ուղարկել իրավասու պատվո դատարան՝ ուսումնասիրման եւ ոստիկանության ծառայողի պատասխանատվությունը անհատականացնելու նպատակով:

⁴³Քննչական հատուկ ծառայությունը զբաղվում է ոստիկանության ծառայողների քրեական հետաքննության հետ կապված բոլոր հարցերով:

Պատվո դատարանի նպատակը անհատին պարսավելն է աշխատանքային կոլեկտիվում եւ վերջինիս կարծիքը ճշտելը արարքի վերաբերյալ: Դեպքերի մեծ մասի պարագայում պատվո դատարանը ունի խորհրդատվական նշանակություն, եւ իրավախախտի համար ծառայողական քննությունը ավարտվում է սոսկ գործընկերների առջեւ պարսավանքի ենթարկվելով:

ՀՀ ոստիկանությունը մշակել է մեթոդաբանական ձեռնարկ ոստիկանական ողջ համակարգի ներսում միասնական եւ կառուցվածքային մոտեցման հիման վրա՝ ծառայողական քննություններ անցկացնելու վերաբերյալ:

Ոստիկանություն-հասարակություն գործընկերությունը կենսական դեր է կատարում թափանցիկության խթանման եւ ոստիկանության ծառայողների մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի բացահայտման հարցում: Հետեւաբար, ոստիկանությանն ուղղված՝ քաղաքացիներից ստացված բողոքների եւ գրավոր հաղորդումների հետ աշխատանքը ոստիկանության կարեւորագույն գործառույթներից մեկն է, ինչպես նաեւ տեղեկատվության հավաքագրման լավագույն ձեւը: ՀՀ ոստիկանապետը վավերացրել է հրամաններ՝ Ընթացակարգեր քաղաքացիներից ստացված առաջարկությունների, բողոքների ու դիմումների⁴⁴ եւ քաղաքացիների ընդունելության մասին:⁴⁵

Նշված հրամանները իրավական հիմք եւ պայմաններ են ստեղծել քաղաքացիների համար. վերջիններս կարող են ներկայացնել ոստիկանության ծառայողների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ իրենց առաջարկությունները, բողոքները, նամակները եւ քննադատությունները՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր: Ոստիկանության ղեկավար մարմինները անձնական պատասխանատվությունն են կրում քաղաքացիներից ստացված նամակների եւ բողոքների համակարգման եւ ընթացք տալու համար: Ոստիկանության բոլոր ստորաբաժանումները, ներառյալ ոստիկանության կրթական եւ ուսումնական կենտրոնները, կատարում են քաղաքացիների ընդունելությունն յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ընդունելության համար նախատեսված հատուկ սենյակներում: Քաղաքացիներին ընդունող ոստիկանության պաշտոնատար անձի անվան, ընդունելության վայրի եւ ժամերի մասին տեղեկությունները տեղադրվում են ոստիկանության ստորաբաժանումների՝ հանրության համար հասանելի մասում: Ոստիկանությունը, նաեւ, զանգվածային լրատվամիջոցների եւ իր պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնում է հասարակությանը հանդիպումների ամսաթվի եւ վայրի մասին:

ՀՀ ոստիկանապետն անձամբ է վերահսկում քաղաքացիների գրավոր դիմումների եւ ընդունելության հետ տարվող աշխատանքը՝ իր տեղակալների եւ աշխատակազմի միջոցով: Բացի այդ, ոստիկանության յուրաքանչյուր վարչությունում եւ բաժնում

⁴⁴Հրաման # 12-Ի, 27.12.2003թ.

⁴⁵Հրաման # 1402-Ա, 18.06.2008թ.

առկա են հատուկ բաժանմունքներ, որտեղ զբաղվում են քաղաքացիների բողոքներով եւ առաջարկություններով: Ոստիկանություն-հասարակություն գործընկերության վերահսկումն իրականացնելիս՝ ՀՀ ոստիկանապետը, ի թիվս այլոց, հատուկ ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, թե արդյոք ոստիկանության աշխատակիցը պատասխանել է քաղաքացու նամակին համապարփակ եւ ճիշտ ժամանակին, թե ոչ, ինչպես նաեւ ոստիկանության աշխատակցի պատասխան նամակի՝ ընդունած որոշման եւ ձեռնարկվելիք միջոցառումների օրինականության եւ հիմնավորվածության վրա:

Ոստիկանության՝ օրենքի գերակայության խթանման հարցում կարեւորագույն դեր կատարող կառույցի առջեւ ծառացած հանձնարարականների արդյունավետ իրականացումը պարզապես անհնար կլիներ իրագործել առանց ոստիկանություն-հասարակություն պատշաճ գործընկերության, հասարակական կազմակերպությունների աջակցության եւ հանրության ակտիվ մասնակցության:

Հանրային մասնակցության եւ ոստիկանություն-հասարակություն գործընկերության առավել ակնհայտ ձեւ է ՀՀ ոստիկանությանը կից՝ Հանրային խորհրդի ստեղծումը: Հանրային խորհրդի կազմում ընդգրկված են մշակույթի աշխատողներ, հասարակական դեմքեր, սպորտային աշխարհի ներկայացուցիչներ եւ հասարակության շրջանում հեղինակություն վայելող անձինք:

Խորհրդի հիմնական գործառնություններն են՝ հասարակական փորձագիտության ենթարկել ոստիկանության իրավանորմատիվային ակտերը, մասնակցել հանրային անվտանգության միջոցների խթանմանը, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը, քննարկել ոստիկանական գործունեության բարելավման հետ կապված կարեւոր հարցեր, մշակել ծրագրեր ուղղված քաղաքացիական եւ հանրային նախաձեռնությունների զարգացմանը, համագործակցել լրատվական գործակալությունների հետ՝ ներկայացնելու անաչառ եւ ամբողջական տեղեկատվություն երկրում՝ ոստիկանական գործունեության վերաբերյալ:

Ոստիկանություն-հասարակություն գործընկերությունը եւ Հանրային խորհրդի ստեղծումը կարեւոր դեր են կատարում ՀՀ ոստիկանությանը սատարելու հարցում՝ մասնագիտական ծառայության եւ կարգապահության շուրջ ներքին հսկողությունն ու վերահսկողությունն իրականացնելով առավել արդյունավետորեն:

Բողոքների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին ժամանակներս դրական հակում է նկատվում, քանի որ նվազել է մասնագիտական ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքերի թիվը: Օրինակ՝ 2006-2007թթ. ոստիկանությունը անց է կացրել 564 ստուգում եւ ծառայողական քննություն, սակայն ոստիկանության կողմից իրականացված համապարփակ կանխիչ միջոցառումների արդյունքում արդեն 2008-

2009թթ. օրինախախտումների թիվը մեծապես նվազել է՝ 292 դեպք, ինչը կազմում է համարյա 50 տոկոս՝ համեմատած նախորդ տարիների հետ:⁴⁶

Նախորդ երեք տարիների եւ 2009թ. 9 ամիսների ընթացքում ոստիկանությունը անհատներից, իրավական կառույցներից եւ բանտարկյալներից ստացել է 856 բողոք: Ոստիկանությունն անց է կացրել 856 ծառայողական քննություն. ոստիկանության 625 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի, նրանցից 167-ը հեռացվել է աշխատանքից, 48 գործ ուղարկվել է քրեական հետաքննության բաժին՝ հետաքննման համար: Արդյունքում հարուցվել է 52 քրեական գործ եւ մեղավոր են ճանաչվել ոստիկանության 26 ծառայողներ:⁴⁷

Պետք է նաեւ նշել, որ ոչ բոլոր բողոքներն ու հաղորդումներն են արդարացի եւ պարունակում են վկայակոչված կարգապահական իրավախախտումը: Բողոք ներկայացնողներից շատերը, պարզապես, նպատակ ունեն խուսափել վարչական կամ քրեական պատասխանատվությունից: Օրինակ՝ 2009թ. ընթացքում քաղաքացիների կողմից ներկայացված 58 բողոք չեն բավարարվել, քանի որ բացակայել է ոստիկանության ծառայողների կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հանգամանքը:

Ներկայումս ՀՀ ոստիկանությունը գտնվում է հիմնարար միջոցառումների ներդրման եւ իրականացման փուլում՝ ամրապնդելու ոստիկանության ծառայողների կարգապահությունը եւ արհեստավարժությունը, մեծացնելու հանրության վստահությունը, խթանելու ոստիկանություն-հասարակություն գործընկերությունը եւ հաղորդակցությունը, բարելավելու ոստիկանության ծառայողների սոցիալական եւ իրավական պաշտպանությունը, ինչպես նաեւ կատարելագործելու վերջիններիս մասնագիտական հմտությունները:

⁴⁶ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, Ռ. Ղամբարյանի ելույթից

⁴⁷Նույն ելույթից

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում արդեն իսկ նշվել է, որ ոստիկանության հաշվետվողականության մեկ այլ հայեցակետ է վերջինիս պատասխանատվությունը հասարակության առջև ընդհանուր առմամբ: Այս առումով երկրում ժողովրդավարական ոստիկանությունը իրականություն դարձնելու համար ոստիկանությունը պետք է ենթարկվի արտաքին արդյունավետ վերահսկողության՝ օրենսդիր, գործադիր եւ դատական կառույցների կողմից:

ԽՈՐՀՐԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ինչպես առաջարկվում է ԵԱՀԿ-ի «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց-ձեռնարկում»⁴⁸ օրենսդիր իշխանությունը (Ազգային ժողովը) իրականացնում է ոստիկանության գործունեության a priori վերահսկողություն՝ նշված գործունեության տարբեր ոլորտները կարգավորող օրենքների ընդունման միջոցով: Ավելին, Ազգային ժողովը կարող է իրականացնել a posteriori վերահսկողություն՝ իր ներքին հանձնաժողովների կամ խորհրդարանական օմբուդսմանի միջոցով:

Հայաստանի Հանրապետության դեպքում, ԵԱՀԿ ուղեցույց-ձեռնարկի սահմանմամբ, Ազգային ժողովն իրականացնում է թե՛ a priori, թե՛ a posteriori վերահսկողություն: Ինչպես նշվեց ավելի վաղ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ սահմանվում է, որ պետական իշխանությունը կիրառվում է ոչ միայն իշխանությունների տարբեր ճյուղերի տարանջատմամբ, այլ նաեւ այդ ուժերի միջեւ առկա հավասարակշռմամբ: Ազգային ժողովը վճռական դեր է կատարում՝ ծառայելով որպես ֆորում՝ հավասարակշռելով օրենսդիր եւ գործադիր ճյուղերը եւ կատարելով ոստիկանության ժողովրդավարական վերահսկողություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանության լիազորությունները դրված են Ազգային ժողովի վրա: Ազգային ժողովը մի շարք ձեւերով ժողովրդավարական վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության ընդհանուր առմամբ, եւ մասնավորապես ոստիկանության վրա:

Նախ եւ առաջ Ազգային ժողովը հավաստիանում է նրանում, որ պետության բյուջեն վերահսկվում եւ բաշխվում է պատշաճ կերպով: Իրականում, համաձայն ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի՝ «Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Մինչեւ բյուջետային տարվա սկիզբը պետական

⁴⁸Տե՛ս անդ.տող. ծանոթ. 13, էջ. 68

բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Պետական բյուջեի քննարկման եւ հաստատման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:⁴⁹ Սակայն, Ազգային ժողովն է վերահսկում պետական բյուջեի իրականացումը, այլ երկրների կառավարություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման հետ միասին:⁵⁰ Բյուջետային վերահսկողությունը արդարացի կերպով իրականացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է անկախ մարմին՝ Վերահսկիչ պալատը: Վերջինս վերահսկում է բյուջետային ռեսուրսների, պետության եւ համայնքի սեփականությունների օգտագործումը: Վերահսկիչ պալատը պարտավոր է նվազագույնը տարին մեկ անգամ օրենսդիր մարմնին ներկայացնել հաշվետվություն վերահսկողության արդյունքների մասին:⁵¹ Վերահսկիչ պալատի կողմից ստացված հաշվետվության դեպքում, միայն, Ազգային ժողովը ուսումնասիրում եւ հաստատում է պետական բյուջեի հատկացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:⁵²

Ինչպես ավելի վաղ նշվեց սույն գեկույցում, ոստիկանությունը կառավարությանը կից մարմին է եւ հիմնականում գործում է գործադիր ճյուղի կազմում: Որպես այդպիսին եւ համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում սահմանված դրույթների՝ վերջինս ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին, հետեւաբար Ազգային ժողովը, բյուջետային վերահսկման իր գործառնություն շրջանակներում, իրականացնում է ոստիկանության ֆինանսական ռեսուրսների (որը կազմում է պետբյուջեի մի մասը) ժողովրդավարական վերահսկողություն:

Այդուհանդերձ, կարել է ամփոփել, որ Ազգային ժողովը սահմանափակ դերակատարություն ունի բյուջետային գործընթացում, քանի որ վերջինս սոսկ հաստատում է այն, կատարում լրացումներ եւ վերահսկում վերջինիս իրականացումը՝ բյուջեի իրականացման վերաբերյալ հաշվետվության հաստատման միջոցով: Թվում է, թե բյուջեի ռեսուրսների նպատակային օգտագործումը դուրս է մնում: Վերջինիս ցայտուն օրինակն է այն իրավիճակը, երբ ՀՀ կառավարությունը, բյուջեի տեղաբաշխման եւ բյուջեի տողերի հիման վրա, հաստատում է գնումների, աշխատանքների եւ ծառայությունների ցանկը: Իրականում, հաստատելով բյուջեի տողերին՝ ըստ տնտեսական դասակարգիչների հատկացված գումարը՝ ՀՀ կառավարությունը այլեւս չի կարող վերահսկել, թե ինչպես են վերջին հաշվով ծախսվում այդ գումարները: Հատուկ մտահոգություն է ներկայացնում տողերի ներքին վերաբաշխման եւ բյուջետային ինդեքսում լրացումներ կատարելու հետ կապված հարցերի լուծումը, ինչն այսօր նույնպես իրականացվում է ՀՀ կառավարության կողմից:

⁴⁹Տե՛ս անդ.տող.ծանոթ. 10, Հոդված 76, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 10-րդ գլուխը, 20.02.2002թ.

⁵⁰Տե՛ս նույն տեղում

⁵¹Տե՛ս նույն տեղում, Հոդված 80

⁵²Տե՛ս նույն տեղում

Օրենսդիր-գործադիր հարաբերության եւ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմի մեկ այլ ուշագրավ կողմ է այսպես կոչված «Յարգ ու պատասխան»-ի ինստիտուտի նստաշրջանը, որն անց է կացվում կառավարության եւ Ազգային ժողովի միջեւ: Այս նստաշրջանները հաճախ ուղիղ եթերով հեռարձակվում են հանրային հեռուստատեսությամբ՝ ապահովելով, որ կառավարությունը նույնպես հաշվետու լինի հասարակությանը: «Յարգ ու պատասխան» նստաշրջանը հնարավորություն է ընձեռում պատգամավորներին, ինչպես նաեւ խորհրդարանական խմբակցություններին ու պատգամավորական խմբերին կառավարությանը ներկայացնել գրավոր եւ բանավոր հարցեր եւ ներկայացնել հարցապնդումներ: Մեկշաբաթյա նստաշրջանի ժամանակ ՀՀ վարչապետն ու կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների հարցերին: Սակայն, Ազգային ժողովը չի ընդունում որեւէ որոշում կապված պատգամավորների կողմից բարձրացված հարցերի հետ:⁵³

A POSTERIORI ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՅՈՂՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ազգային ժողովի կողմից՝ կառավարության տարբերի ճյուղերի եւ մարմինների պարագայում իրականացվող ժողովրդավարական վերահսկողության հիմնական ձեւերից մեկը մշտական հանձնաժողովներն են: Աշխարհի գրեթե բոլոր խորհրդարաններն ունեն մասնագիտացված մշտական հանձնաժողովներ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ պաշտպանությունը, անվտանգությունը, ոստիկանությունը եւ այլն: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը բացառություն չէ այս ընդունված պրակտիկայից:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի՝ Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով: Այս հանձնաժողովները ստեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի եւ *այլ հարցերի* նախնական քննարկման, ինչպես նաեւ վերջիններիս շուրջ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու նպատակով:

ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգի 21-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում սահմանված են ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտները: Հանձնաժողովը գումարվում է ներկայացնելու եզրակացություններ պաշտպանության, անվտանգության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ռազմական-ինդուստրիալ համակարգի, ռազմական կրթական հաստատությունների, ինչպես նաեւ զինվորական եւ

⁵³Տե՛ս նույն տեղում, հոդված 80

ոստիկանական ծառայությունների հարցերի շուրջ:⁵⁴ Նշված մշտական հանձնաժողովի կանոններն ու ընթացակարգը, գործառնական որոշակի իրավասությունը սահմանված են օրենսդրական ակտով, որը ենթակա է մշտական հանձնաժողովի որոշման հաստատմանը:

ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգի համաձայն (հոդված 21.7)՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողով կարող է ունենալ մեկ օգնական եւ երեք փորձագետ: Իսկ սույն փաստաթղթի 23-րդ հոդվածի համաձայն՝ իր կառուցվածքի ներսում մշտական հանձնաժողովը կարող է ստեղծել ենթահանձնաժողովներ, ինչպես նաեւ աշխատանքային խմբեր՝ սահմանելով վերջիններիս հանձնարարականներն ու գործունեությունը:

Հիմնախնդիրներից մեկը, որին առճակատվում են մշտական հանձնաժողովները, քաղաքացիական հասարակության սեկտորի՝ մասնավորապես հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելու հնարավորության բացակայությունն է: Սա իր հերթին կարող է թուլացնել հանձնաժողովների դիրքը եւ լիազորությունները ոստիկանական համակարգի խորհրդարանական համապատասխան վերահսկողություն իրականացնելու հարցում:

ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի կարծիքով Ազգային ժողովը չունի ոստիկանությանը վերահսկելու ուղղակի մեխանիզմ: Գործնականում միակ ձեւը, որը Ազգային ժողովը կիրառում է որպես վերահսկողություն անվտանգության ոլորտի պետական հաստատությունների նկատմամբ, դա բյուջեի վերահսկողությունն է, այնինչ վերահսկողության այլ միջոցները ենթադրում են ղեկավարման որոշակի ձեւեր: Ինչ վերաբերում է բյուջեի վերահսկողությանը, մշտական հանձնաժողովը վերահսկում է ոստիկանության ծախսերի կատարողականը եւ տալիս եզրակացություն, թե արդյոք ոստիկանությանը հատկացված գումարները ծախսվել են հիմնավոր կերպով եւ բյուջեի համաձայն, թե ոչ: Ինչպես նշվեց վերելում, մշտական հանձնաժողովի հիմնական գործառնություն է եզրակացություն տալը այն օրենքների ընդունման վերաբերյալ, որոնք վերաբերում են պաշտպանությանը, ազգային անվտանգությանը եւ ներքին գործերին: ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի կարծիքով ցայտուն օրինակներից է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, որը հանձնաժողովի ներսում քննարկման ակտիվ թեմա է հանդիսացել:

Մեկ այլ օրինակ է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, երբ մշտական հանձնաժողովը բազմիցս ներկայացրել է բացասական եզրակացություն:

⁵⁴Հասանելի է նաեւ՝

http://parliament.am/committees.php?ID=11153&do=show&cat_id=119&month=all&yesr=2009&lang=eng

Ինչ վերաբերում է կառավարության հարց ու պատասխաններին, ոստիկանությունը որպես այդպիսին կառավարության մարմին չէ, եւ ոստիկանապետը պարտավորվածություն չունի կանգնել Ազգային ժողովում եւ պատասխանել բարձրացրած հարցերին. ոստիկանապետը, տեխնիկապես, հաշվետու չէ Ազգային ժողովի առջեւ հարց ու պատասխան նստաշրջանի ժամանակ:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովն ունի նաեւ ոստիկանության ծառայողների գործողությունների եւ անգործության վերաբերյալ քաղաքացիների կողմից ներկայացրած հարցերին եւ բողոքներին հետամուտ լինելու ներուժը: Հանձնաժողովը կարող է համապատասխան նամակ ուղարկել ոստիկանություն՝ տեղեկություններ պահանջելով վկայակոչված օրինախախտման վերաբերյալ, նշելով, թե որ օրենքներն են խախտվել ոստիկանության ծառայողների կողմից եւ ոստիկանությունից պահանջել հանձնաժողովին տեղեկացնել տվյալ դեպքի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների մասին: Չի բացառվում, որ մշտական հանձնաժողով ներկայացված բողոքի հիման վրա ոստիկանությունը նախաձեռնի ծառայողական քննություն:

Սովորաբար հանձնաժողովի նիստերը բաց են եւ պատգամավորներից յուրաքանչյուրը կարող է մասնակցել աշխատանքային նիստերին: Այս նիստերին մասնակցում են նաեւ ոստիկանության ներկայացուցիչները, եւ պատգամավորները հնարավորություն են ունենում նրանց հետ քննարկել տարբեր հարցեր եւ հիմնախնդիրներ: Նիստերը դռնփակ են ընթանում միայն այն ժամանակ, երբ քննարկվող հարցը կապված է պետական կամ ծառայողական գաղտնիքի կամ բյուջեի վերահսկողության հետ:

Չնայած այն բոլոր գործառնությունների, որ իրականացնում է մշտական հանձնաժողովն այսօր, դեռեւս Ազգային ժողովը, որպես այդպիսին, չունի վերահսկողության համապատասխան մեխանիզմ, իսկ վերջինս կարող է ապահովվել միայն սահմանադրության ուղղակի դրույթների ներքո, ըստ որի վերահսկողություն իրականացնելու լիազորություն ընդհանուր առմամբ կունենա Ազգային ժողովը, իսկ մասնավորապես՝ մշտական հանձնաժողովը: Անհրաժեշտություն կա հանձնաժողովի աշխատանքները դարձնել առավել նախաձեռնողական, ավելի հաճախ անցկացնել աշխատանքային նիստերը եւ ավելի արագ արձագանքել քաղաքացիներին հարցադրումներին եւ խնդրանքներին:

Վերջերս ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակը փորձագետների խումբ է ստեղծել մշտական հանձնաժողովին կից՝ աջակցելով հանձնաժողովի առջեւ դրված նպատակների իրականացմանը: Փորձագետների նշված խմբի շրջանակներում մշտական հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ: Հասարակական կազմակերպությունները ներկայումս կարող են ներկայանալ եւ ներկայացնել իրենց աշխատանքը հանձնաժողովին:

Հայաստանի Հանրապետությունն ունի օմբուդսմանի (Մարդու իրավունքների պաշտպանի) գրասենյակ: Օմբուդսմանի դերը չափազանց կարեւոր է յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակությունում: Ինչպես նշված է ԵԱՀԿ-ի «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց-ձեռնարկում» օմբուդսմանը խորհրդարանական վերահսկողության մեկ այլ միջոց է, ով կարող է նախաձեռնել հետաքննություն ex officio կամ հետամուտ լինել օրինախախտումների վերաբերյալ քաղաքացիներից ստացված բողոքներին:⁵⁵ Օմբուդսմանը/հանրային պաշտպանը սովորաբար բարձրաստիճան պետական պաշտոնյա է, անկողմնակալ եւ կառավարությունից անկախ, ով նշանակվում է Ազգային ժողովի կողմից:⁵⁶

Համաձայն ՀՀ Սահմանադրության դրույթների՝ մարդու իրավունքների պաշտպանը անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությունը: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք համագործակցում են մարդու իրավունքների պաշտպանի հետ (ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.1):⁵⁷ Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ «Պաշտպան») ընտրվում է Ազգային ժողովի կողմից 6 տարի ժամկետով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Ըստ Սահմանադրության թեկնածուն պետք է վայելի հասարակական բարձր հեղինակություն եւ վստահություն, որպեսզի ընտրվի որպես Պաշտպան: Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է նշված ժամկետի ընթացքում:⁵⁸

Օրենքում մատնանշված է բողոքների այն շրջանակը, որը ենթակա է Պաշտպանի քննարկմանը: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանված է, որ Պաշտպանը լիազորված է քննարկելու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաեւ միջազգային իրավունքի սկզբունքներով եւ նորմերով նախատեսված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները: Համապատասխանաբար, սույն զեկույցի համատեքստում, Պաշտպանը լիազորված է

⁵⁵Տե՛ս անդ.տող.ծանոթ. 13, էջ 69

⁵⁶Զուլի Բերդ «Ոստիկանության հաշվետվողականությունը հարավաֆրիկյան համագործակցության երկրներում», էջ 8, 2005թ. Զրեաբանության ինստիտուտ, Զեյփթաունի համալսարան

⁵⁷Տե՛ս, ի թիվս այլոց, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, Հոդված 2, 21.10.2003թ.

⁵⁸Տե՛ս անդ.տող.ծանոթ. 57

քննարկելու ոստիկանության ծառայողների կողմից կատարված՝ մարդու իրավունքների հետ կապված խախտումները եւ չարաշահումները:

Սակայն, պաշտպանը չի կարող միջամտել դատական վարույթին: Պաշտպանը կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաեւ պետական այլ մարմինների նիստերին եւ ելույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների, ինչպես նաեւ սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր: Պաշտպանն իրավունքն ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ելույթ ունենալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, երբ քննարկվում են մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր:⁵⁹ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Պաշտպանին: Պաշտպանը իրավունք ունի անարգել այցելել գորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար: Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի վերջիններս նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը: Իհարկե, բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:⁶⁰

Ինչպես արդեն նշվեց, բողոքի ուսումնասիրման ժամանակ Պաշտպանը կարող է անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ եւ կազմակերպություն, նրանցից պահանջել եւ ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր եւ փաստաթղթեր, իրահանգել համապատասխան պետական գործակալությունների իրականացնել փորձագիտական հետաքննություն եւ պատրաստել եզրակացություն բողոքի հետաքննության ժամանակ՝ պարզաբանման ենթակա հարցերի շուրջ:⁶¹

Միեւնույն ժամանակ Պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ այն պետական մարմին, տեղական կառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի եւ կատարված ուսումնասիրությունների արդյունքների

⁵⁹Տե՛ս նույն տեղում, Հոդված 7

⁶⁰Տե՛ս նույն տեղում, Հոդված 11

⁶¹Տե՛ս նույն տեղում, Հոդված 12

վերաբերյալ, ինչպես նաեւ հիմնավորել իրենց դիրքորոշումն ամբողջությամբ:⁶²

Պաշտպանի դերին դիմելու եւ հասկանալու նրա իրավասության ներքո առկա ժողովրդավարական վերահսկողության մակարդակը պետք է տեսնել, թե ինչ տեսակ որոշումներ սա կարող է ընդունել: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով Պաշտպանը, ի թիվս այլոց, օժտված է հետեւյալ լիազորություններով՝

- 1) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ սա տեսնում է մարդու իրավունքների եւ ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերականգման համար անհրաժեշտ եւ կատարման ենթակա հնարավոր միջոցառումները:
- 2) դիմել Սահմանադրական դատարան՝ մարդու իրավունքների եւ ազատությունների խախտումների հետ կապված հարցերի շուրջ:
- 3) մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի եւ դրա պաշտոնատար անձի՝ օրենքին եւ այլ իրավական ակտերին հակասող նորմատիվային իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը:
- 4) առաջարկել իրավասու պետական մարմինների՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, եւ (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները:⁶³

Հստակ կարելի է տեսնել, որ Պաշտպանի գործունեությունը հավասարազոր չէ դատական պաշտպանությանը, իսկ նրա որոշումներն ու եզրակացությունները պարտադիր բնույթ չունեն: Այդուհանդերձ, կարելի է այն, որ Պաշտպանը կարող է ծառայել որպես միջոց պետական ծառայողի, օրինակ՝ ոստիկանության աշխատակցին դատարանի առջեւ պատասխանատվության ենթարկելու հարցում՝ վիճարկելով վերջինիս

⁶²Տե՛ս նույն տեղում, Հոդված 13

⁶³Տե՛ս նույն տեղում, Հոդված 16

որոշումները, գործողությունները կամ անգործությունը, որոնց արդյունքում խախտվում են մարդու իրավունքներն ու ազատությունները:

Ավելի լայն առումով՝ Պաշտպանի հիմնական դերը ավելի շատ խորհրդատվական բնույթ է կրում: Պաշտպանի արդյունավետության հիմնական խոչընդոտն այն է, որ մարդու իրավունքների խախտումների շուրջ վերջինիս կողմից կատարված առաջարկությունները կարող են կամ անտեսվել կամ չիրագործվել իրավախախտում կատարած կազմակերպության կողմից: Հնարավոր է նաեւ, որ Պաշտպանի գրասենյակը չունենա բավարար ռեսուրսներ կամ գերծանրաբեռնված լինի:

Այդուհանդերձ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ պետական մարմինը կամ պաշտոնատար անձը, որն ստացել է Պաշտպանի միջնորդությունը, պարտավոր է դա ստանալու օրվանից 20 օրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին: Ամբողջ գործընթացի թափանցիկությունը հասրության համար ապահովելու համար հատկապես կարելի է այն, որ, Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով իրապարակել իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ Պաշտպանի որոշման եւ միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձանց պատասխանների հետ միասին, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:⁶⁴ Իրավական այս դրույթն, անշուշտ, կարելի է դնել խաղում պետական այն պաշտոնատար անձանց եւ գործակալությունների (ներառյալ ոստիկանության) անունները նշելու եւ պարսպվելու համար, ովքեր չեն կատարում Պաշտպանի առաջարկությունները:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից՝ ժողովրդավարական վերահսկողության մեկ այլ կարելի փաստաթուղթ է պաշտպանի գեկույցը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր գործադիր, եւ դատական իշխանության մարմիններ է ներկայացնում իր գեկույցը նախորդ տարվա ընթացքում իր գործունեության եւ երկրում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին գեկույց: Չեկույցը ներկայացվում է Ազգային ժողով՝ վերջինիս գարնանային նստաշրջանի առաջին գումարման նիստին: Պաշտպանը իր գեկույցը ներկայացնում է նաեւ զանգվածային լրատվամիջոցներին եւ հասարակական կազմակերպություններին: Ավելին, բացառիկ դեպքերում, հասարակական հնչեղություն

⁶⁴Տե՛ս նույն տեղում

ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:⁶⁵

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից ներկայացված վերջին՝ արտահերթ եւ հասարակության շրջանում քննարկման առարկա դարձած զեկույցներից մեկը 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների եւ հետընտրական զարգացումների վերաբերյալ զեկույցն էր, որի նպատակն էր նախագահական ընտրությունների եւ հետընտրական զարգացումների համապարփակ վերլուծության ներկայացումը: Իր զեկույցում Պաշտպանը արծարծում է հարցեր կապված ցույցերի օրինականության (20 փետրվարի-1 մարտի 2008թ., Ազատության հրապարակ), մարտի 1-ի գործողությունների օրինականության՝ քրեական դատավարության, ոստիկանության լիազորությունների եւ ոստիկանական գործողությունների համամասնության, մասնավորապես ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրման տեսանկյուններից:⁶⁶

2008թ. տարեկան զեկույցում Պաշտպանը հատուկ բաժնով ներկայացրել է պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտումները եւ հատուկ ենթաբաժնով՝ ոստիկանության կողմից կատարած մարդու իրավունքների խախտումները:

Համապատասխանաբար, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ստացել է ոստիկանության աշխատակիցների դեմ ուղղված 187 բողոք, որոնք վերաբերում են մարդու իրավունքների ոտնահարումներին: Ներկայացված 187 բողոքից 137-ը ընդունվել են պաշտպանի կողմից՝ հետագա ընթացք ստանալու նպատակով:⁶⁷ Նախորդ տարիների հետ համեմատած՝ առկա է ոստիկանության գործողությունների կամ որոշումների վերաբերյալ քաղաքացիներից ստացված բողոքների թվի հսկայական աճ: Պաշտպանի գրասենյակին ուղղված բողոքները եւ՝ գրավոր են, եւ՝ բանավոր: Վախենալով ոստիկանության ծառայողների կողմից հետապնդումից կամ խոշտանգումից՝ բողոքների զգալի մեծամասնությունը ներկայացվել է բանավոր: Բողոքները հիմնականում առնչվում են այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը առանց որեւէ հիմքի, քրեական գործ չհարուցելը օրենքով նախատեսված կարգով, մեղադրյալից՝ ապացույցների եւ վկայության ձեռքբերումը խոշտանգման միջոցով, վախ եւ սպառնալիք, անձնագիրը քաղաքացուն չտրամադրելը: Մի շարք քաղաքացիներ, որոնք ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են խոշտանգումների եւ սպառնալիքի, ստորագուցիչ եւ նվաստացնող վերաբերմունքի, ոչ միայն չեն ներկայացրել գրավոր բողոք Մարդու

⁶⁵Տե՛ս նույն տեղում , Զոդված 17

⁶⁶Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տե՛ս 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների եւ հետընտրական զարգացումների վերաբերյալ՝ Մարդու իրավունքների պաշտպանի Արտահերթ զեկույցը, որը հասանելի է՝ <http://www.ombuds.am/main/en/10/31/>

⁶⁷Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաշվետվություն, 2008թ. էջ 115, 03.10.2009

իրավունքների պաշտպանի գրասենյակ, այլ նաեւ չեն մատնանշել իրենց ինքնությունը՝ վախենալով ոստիկանության կողմից հետագա հետապնդումից:⁶⁸ Իր զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանը նշում է, որ հիմնվելով իր ուսումնասիրությունների եւ բացահայտումների վրա, նա հանգել է այն եզրակացության, որ ոստիկանության ծառայողները իրականացրել են քրեական դատավարության օրենսգրքի դրույթները խախտող գործողություններ:

Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է նաեւ մի շարք բողոքներ կապված նախագահական ընտրությունների արդյունքների հետ չհամաձայնելու նպատակով 2008թ. մարտի 1-ին եւ 2-ին տեղի ունեցած ցույցերի ժամանակ ոստիկանության կողմից կատարված անօրինական գործողությունների հետ: Բողոքի նյութը վերաբերում էր կեղծ քրեական գործերի հարուցմանը ընդդեմ ցուցարարների, ովքեր ունեն քաղաքական այլ հայացքներ, ինչպես նաեւ մասսայական ձերբակալություններին, փաստաբանների չտրամադրմանը եւ այլն:

Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումների հասցեագրման գործընթացի ամենադժվար խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի համար այն է, սակայն, որ վերջինիս համար գրեթե անհնար է ապացուցել ոստիկանության ծառայողի կողմից օրենքի խախտման առկայությունը, քանի որ պետական գործակալությունը կամ պաշտոնյան, ով պատասխանատու է վկայակոչված իրավախախտումների համար, պարզապես ժխտում է, որ իրականում տեղի է ունեցել իրավախախտում:⁶⁹

Այդուհանդերձ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի եւ ոստիկանության միջեւ առկա համագործակցությունը համեմատաբար լավ մակարդակի վրա է: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը մեծապես գնահատում է իր եւ ոստիկանության միջեւ առկա համագործակցությունը: Պետական հաստատությունների շարքում ոստիկանությունը միակ կառույցն է, որ Փոխհամաձայնության հուշագրի է ստորագրել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ: Նշված փոխհամաձայնության հուշագրի շրջանակներում ոստիկանությունն ու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը համաձայնվել են ակտիվորեն համագործակցել մարդու իրավունքների խթանման եւ պաշտպանության հարցում: Թեեւ ոստիկանությունը օրենքի ուժով պարտավոր է տրամադրել տեղեկատվություն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին եւ համագործակցել վերջինիս հետ, այդուհանդերձ նշված փոխհամաձայնության մեխանիզմը համագործակցությունը դնում է էլ ավելի սերտ մակարդակի վրա:

⁶⁸Տե՛ս նույն տեղում, էջ 116

⁶⁹Տե՛ս նույն տեղում, էջ 127

Ներկայումս ոստիկանությունը բավականին լրջորեն է ընդունում Մարդու իրավունքների պաշտպանի դերը, քանի որ, եթե կատարվի այս երկու կառույցների միջև առկա հակազդեցության եւ համագործակցության համեմատություն, պարզ կդառնա, որ ներկայումս վերջինս զգալիորեն աճել է, ինչը հետեւանք է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հանդեպ հասարակական ընկալման , հատկապես վերջինիս տարեկան եւ արտահերթ զեկույցների լույսի ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի շնորհիվ ոստիկանությունը դադարեցրել է ոստիկանության բաժիններում մարդկանց ծեծի ենթարկելու պրակտիկան: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ստեղծել է անհապաղ օգնության խմբեր, որոնք կարող են արագ արձագանքել իրավախախտումներին՝ ժամանելով ոստիկանության բաժին եւ հավաստիանալով, թե արդյոք առկա են ծեծի դեպքեր, թե ոչ, կատարելով լուսանկարահանում, ինչը հետագայում որպես ապացույց կօգտագործվի դատարանում:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը աշխատանքներ է կատարում նաեւ ոստիկանության կալանավայրերում՝ մասնավորապես վերահսկում է այդ վայրերի՝ սանիտարական, սննդի, առողջական եւ այլ պայմանները:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կարող է վերահսկել եւ ուսումնասիրել բանտարկյալների գրանցման մատյանները: Եղել են մի շարք դեպքեր, երբ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը բացահայտել է քրեական դատավարության մի շարք իրավախախտումներ. օրինակ, երբ անձը ազատագրկվել է ավելի քան 72 ժամ առանց ընթացակարգային կարգավիճակի վերաբերյալ որեւէ որոշման (եղել են, օրինակ 7-8 օր տեւող դեպքեր): Այս դեպքերում հաճախ քննիչները իրենց գործողությունները արդարացնում էին որպես վերադաս դատախազի ներքին հրաման, ինչը, իհարկե, օրենքի խախտում է: Ներկայումս, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատանքների արդյունքում ոստիկանապետը ներքին հրաման է արձակել առ այն, որ, եթե ձերբակալված անձը ձերբակալումից 3 ժամ հետո չի ստանում դատավարական որեւէ կարգավիճակ, ապա նա պետք է ազատ արձակվի:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից ստացված նամակների եւ բողոքների հիման վրա՝ ոստիկանությունը մի շարք դեպքերի համար ձեռնարկել է ծառայողական քննություն՝ իր անձնակազմի կողմից ցուցաբերած ոչ պատշաճ վարքագծի բացահայտման ուղղությամբ:

Գործադիր իշխանությունը, իր պետական, տարածքային եւ տեղական կառույցների միջոցով կարող է հաշվետվություն պահանջել ոստիկանությունից, քանի որ, ի վերջո, այն կատարում է ոստիկանության՝ գործադիր իշխանության մաս հանդիսացող կառույցի ուղղակի վերահսկողություն: Ինչպես արդեն նշվել է ավելի վաղ եւ որպես ելակետային դրույթ՝ Հայաստանի Հանրապետությունում իր ֆինանսական միջոցները ոստիկանությունը ստանում է պետբյուջեից, ինչը որոշվում է կառավարության կողմից: Ոստիկանության՝ գործադիր մարմինների կողմից կատարվող վերահսկողության մեկ այլ կարեւոր հայեցակետ է այն հանգամանքը, որ կառավարությունն է պատասխանատու երկրի ներքին քաղաքականության մշակման եւ իրականացման համար:⁷⁰

Իհարկե, կառավարությունն է տալիս ուղենիշներ եւ ցուցումներ ոստիկանական գործունեության ընդհանուր առաջնությունների վերաբերյալ՝ առանց խոչընդոտելու սպեցիֆիկ հանձնարարականները կատարելու գործառնական անկախությանը:

Ղատախազության դերը

Ղատախազներն ունեն ոստիկանության նկատմամբ վերահսկողության մեխանիզմ հանդիսանալու մեծ լիազորություններ: Իհարկե, ղատախազները կարող են քննության դնել ոստիկանության աշխատակիցների կողմից անցկացրած գործի քննության մեթոդները, ոստիկանության քննիչներից պահանջել նորից քննել գործը եւ տրամադրել լրացուցիչ տեղեկություններ եւ ապացույցներ, դրանով իսկ կանխելով ոստիկանության ծառայողների կողմից պաշտոնական ոչ պատշաճ վարքագծի կոծկման հնարավոր դեպքերը: Համաձայն ՀՀ սահմանադրության 103-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության ղատախազությունը միասնական, կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր ղատախազը: Գլխավոր ղատախազը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ եւ Ազգային ժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր ղատախազ: Գլխավոր ղատախազության համար սահմանադրությամբ սահմանված են հետեւյալ ընդհանուր գործառնականները: Վերջինս, ի վերջո, կոչված է հետեւյալին՝

1. հարուցել քրեական հետապնդում,
2. իրականացնել հսկողություն հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ,
3. դատարանում պաշտպանել մեղադրանքը,
4. պետական շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան,
5. բողոքարկել դատարանի վճիռները, դատավճիռները եւ որոշումները,

⁷⁰Տե՛ս անդ.տող.ծանոթ.10, Հոդված 85

6. հսկողություն իրականացնել պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:⁷¹

Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում՝ օրենքի հիման վրա:

Դատախազի լիազորությունների ավելի լայն շրջանակներում՝ դատախազությունը կարող է իր ձեռքը պահել ոստիկանության զարկերակի վրա՝ վերահսկելով նախաքննության եւ հետաքննության, ինչպես նաեւ պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականությունը: Ոստիկանությանը հաշվետու պահելու նպատակով, ինչպես նաեւ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25.6 հոդվածի համաձայն՝ դատախազը, ով ղեկավարում է հարցաքննությունն ու հետաքննությունը, կարող է հարցաքննությունը կամ հետաքննությունը անցկացնող համապատասխան մարմնից հայցել, որ վերջինս կատարի ծառայողական քննություն կամ քննություն այն անձի նկատմամբ, ով իրականացրել է հարցաքննությունն ու հետաքննությունը: Դիմումը պետք է ուղարկվի այն պաշտոնատար անձի ղեկավարին, ով կատարել է իրավախախտում: Դեկավարը պարտավոր է դիմումը ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում սկսել ծառայողական քննություն կամ ուսումնասիրություն: Օրինակ՝ դատախազը կարող է դիմել համապատասխան մարմնին՝ ոստիկանության քննիչին մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի համար ծառայողական քննության ենթարկելու նպատակով:

Մեկ այլ օրինակ է այն, որ դատախազը կարող է այցելել բոլոր այն վայրերը, որտեղ գտնվում են ազատազրկված անձինք, ծանոթանալ այն փաստաթղթերի հետ, ըստ որոնց անձը ազատազրկվել է, ստուգել պատժի եւ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու որոշումների օրինականությունը, անձին ազատությունից զրկելու հետ կապված հրահանգների եւ որոշումների համապատասխանությունը օրենսդրությանը: Այն դեպքում, երբ դատախազը հայտնաբերում է այնպիսի գործողություն, որը հակասում է օրենսդրությանը, դատախազությունը պետք է հանդես գա վերջինս վերանայելու միջնորդությամբ: Դատախազը իրավունք ունի նաեւ վերացնելու վիճարկվող ակտի գործողությունը եւ այն վերանայելու վերաբերյալ առաջարկությամբ հանդես գալ: Դատախազն իրավունք ունի անհապաղ ազատելու ազատությունից զրկվելու վայրերում, ինչպես նաեւ այդ վայրերի տուգանային եւ կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց, իսկ եթե անձը ազատությունից զրկվել է ազատությունից զրկվելու վայրի վարչակազմի իրավական ակտի հիման վրա, ապա դատախազի կարգադրությամբ ակտը կայացրած անձը պարտավոր է անհապաղ վերացնել ակտը, իսկ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների եւ ազատությունների խախտման կասկածի դեպքում պաշտոնատար անձանցից պա

⁷¹Տե՛ս անդ.տող.ծանոթ.10, Հոդված 103, «Դատախազության մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, 22.02.2007թ.

հանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին:⁷²

Ընդհանուր առմամբ դատախազական վերահսկողությունն իրականացվում է երեք ուղղություններով՝ օպերատիվ-հետախուզական գործունեության, հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ: Հիմնականում, դատախազությունն իրականացնում է ոստիկանության քննիչների կողմից կատարված հետաքննության օրինականության վերահսկողություն: Սա այն հիմնական ոլորտն է, որտեղ արդյունավետորեն իրականացվում է դատախազության վերահսկումը ոստիկանության աշխատանքի նկատմամբ, եւ հարց է ծագում, թե արդյոք դատախազը տիրապետում է անհրաժեշտ իրավական միջոցների՝ պատշաճ կերպով վերահսկողությունն իրականացնելու համար, թե՞ ոչ:

Արդյունավետության հարցը առաջ է բերում երկու հիմնախնդիր. առաջինը՝ իրավական միջոցների, երկրորդը՝ համապարփակ քրեական հետաքննություն իրականացնելու արժանահավատ եւ կարողունակ ռեսուրսների պակասը: Հաճախ ոստիկանության երիտասարդ եւ աշխատանքային փորձ չունեցող ծառայողներին անհրաժեշտ են ավելի շատ հմտություններ եւ վերապատրաստման դասընթացներ, որպեսզի վերջիններս կարողանան իրականացնել պատշաճ կերպով հետաքննություն: Այս հիմնախնդիրը կարող է լուծվել ոստիկանության քննիչների համապարփակ վերապատրաստման դասընթացների միջոցով:

Ոստիկանական համակարգի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով հավասարապես կարելու է ունենալ ոստիկանության քննիչների եւ դատախազների պարտականությունների եւ լիազորությունների հստակ հավասարակշռություն՝ ապահովելով, որ թե՛ մեկը, եւ թե՛ մյուսը գործեն օրենքի շրջանակներում եւ ճշգրիտ համապատասխանությամբ:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Որպես քրեական արդարադատության համակարգի մաս դատական համակարգը կենսական դեր է կատարում ոստիկանության գործառնությունների վերահսկման հարցում: Ընդհանուր առմամբ դատարանները վերահսկողություն իրականացնում են քաղաքացիական եւ քրեական դատավարությունների միջոցով:⁷³

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների յուրա-

⁷²Տե՛ս նույն տեղում՝ Հոդված 29

⁷³Տե՛ս անդ.տող. ծանոթ. 13, էջ 69

քանչյուրի իրավունքը:⁷⁴ Սահմանադրությամբ սահմանված է նաեւ յուրաքանչյուրի՝ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությանը, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին ուղղակիորեն դիմելու իրավունքը:⁷⁵ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մանրամասն սահմանում է պետության մեջ գործող դատական պաշտպանության ձեւերը, որոնք հասանելի են բոլոր նրանց համար, ում նկատմամբ պետական իշխանությունների կողմից կատարվել են իրավախախտումներ:

Հայաստանի Հանրապետության դատական համակարգը ունի եռաստիճան կառուցվածք: Այն բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններից, ինչպես նաեւ առանձին Սահմանադրական դատարանից, որն օժտված է սահմանադրական արդարադատություն իրականացնելու եւ օրենքների սահմանադրականության շուրջ ծագած վեճերի լուծման բացառիկ լիազորությամբ:⁷⁶ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության հետ կապված հարցերի, վճռաբեկ դատարանն է, որն ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը:⁷⁷

Բացի այդ, 2008թ. հունվարի 1-ից իր աշխատանքներն է սկսել ՀՀ վարչական դատարանը: Դատարանի իրավասության շրջանակներում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ վերջիններիս պաշտոնյաների կողմից կատարված գործողությունների եւ անգործության, վարչական եւ նորմատիվային ակտերի հետ կապված գործերի դատական քննությունը:⁷⁸ Դատավճռի արդարացիության վերաբերյալ բողոքը ընթանում է վճռաբեկության ընթացակարգով:⁷⁹ Որոշ դեպքերում ինչպես սահմանված է օրենքով, վարչական դատարանը նույնպես կարող է կայացնել վերջնական որոշում, որը ենթակա չէ բողոքարկման: Եթե անձը համաձայն չէ ոստիկանության ծառայողի որոշման, գործողությունների կամ անգործության հետ, կամ, եթե, ոստիկանության ծառայողը համաձայն չէ իր վերադասի գործողությունների հետ, այդ ժամանակ վարչական դատարանը ծառայում է որպես այսպես կոչված «համապատասխան դատական ատյան»՝ ֆորում: Չկան հատուկ դատարաններ, որոնք զբաղվում են ոստիկանության կամ զինվորական ծառայողների հետ կապված գործերի քննությամբ:

Ինչ վերաբերում է ընդհանուր իրավասության դատարաններին, վերջիններիս իրավազորության շրջանակները ներառում են քաղաքացիական եւ քրեական գործերի

⁷⁴Տե՛ս անդ.տող.ծանոթ. 10, էջ 18

⁷⁵Տե՛ս նույն տեղում

⁷⁶Տե՛ս նույն տեղում, Հոդվածներ 91-93

⁷⁷Տե՛ս նույն տեղում, Հոդված 92

⁷⁸ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 10 դեկտեմբերի 2007թ.

⁷⁹Տե՛ս նույն տեղում եւ Հոդված 118, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Գլուխ V

քննությունը:⁸⁰ Հայաստանի Հանրապետությունում վերաքննիչ կարգով բողոք կարող է բերվել Վերաքննիչ դատարանի քրեական կամ քաղաքացիական գործերով պալատ⁸¹ Համապատասխանաբար, վերաքննիչ դատարանը օժտված է ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացրած դատավճիռների եւ վճիռների վերանայման լիազորությամբ:⁸²

Սույն գեկույցի շրջանակներում հետաքրքիր է նաեւ ուսումնասիրել Քրեական դատավարության օրենսգիրքը եւ հակիրճ ներկայացնել խափանման միջոցների այն ցանկը, որոնց դեպքում պահանջվում է դատական վերանայում: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի⁸³ սահմանմամբ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներն են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու եւ դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Ի թիվս այլոց, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածով որպես խափանման միջոցներ են սահմանվում կալանավորումը, գրավը, ստորագրությունը՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը եւ հրամանատարության հսկողության հանձնելը:⁸⁴ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլուխը վերնագրված է որպես Դատական վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածով սահմանվում է դատարանի վերահսկողության ոլորտը. դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու եւ անձի սահմանադրական իրավունքները եւ ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները: Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում եւ կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

Այնպիսի քննչական գործողություններ, ինչպիսիք են բնակարանի խուզարկությունը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները (հոդված 279) կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Դատարանն ունի նաեւ քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառման բացառիկ իրավունք, ինչպիսիք են՝ կալանքը, կալանքի ժամկետի երկարացման

⁸⁰ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդված 15, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 44

⁸¹ՀՀ դատական օրենսգիրք, 21 փետրվարի 2007թ.

⁸²Տե՛ս Նույն տեղում, Հոդված 39

⁸³ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ փոփոխված 2009թ. հունիսի 8-ին

⁸⁴Տե՛ս Նույն տեղում, Հոդված 134.2

վերաբերյալ հարցի տնօրինումը, ձերբակալումը, ինչպես նաեւ կալանքը գրավով փոխարինելը:

Վերոնշյալ դրույթներից կարելի է հստակ տեսնել, որ դատարանի կողմից իրականացվող վերահսկողությունը կարելի է դեր է կատարում նախաքննության գործընթացի արդյունավետության եւ օրինականության ապահովման հարցում:

Թեւ սահմանադրական բարեփոխումները, վերջերս ուժի մեջ մտած Դատական օրենսգիրքը,⁸⁵ ինչպես նաեւ դատական համակարգի ծառայողների վարքագծի կանոնները երաշխավորում են դատական համակարգի անկախությունն ու անկողմնակալությունը, սակայն, դատական համակարգում դեռեւս առկա է կաշառակերությունը: Համընդհանուր ընկալումն այն է, որ դատարանները հազվադեպ են կայացնում կառավարության կամ դատախազի կամքին հակառակ որոշումներ:

ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի «Մարդու իրավունքների զեկույցում» նշված է, որ «չնայած կառուցվածքային փոփոխություններին, դատարանները դեռեւս ենթակա են գործադիր մարմինների կողմից քաղաքական ճնշման. դատական համակարգում առկա կաշառակերությունը լուրջ ճնշում է»: Դատական համակարգի ինքնուրույնությունը հասարակության կողմից մեծապես քննադատվեց 2008թ. ՀՀ նախագահական ընտրություններից հետո՝ այսպես կոչված «քաղաքական բանտարկյալների» դատավարությունների արդյունքում: Հասարակության շրջանում մեծապես տիրում է այն ընկալումը, որ գործադիր մարմինը, մասնավորապես ՀՀ Նախագահն ու պետական պաշտոնատար անձինք ճնշում են գործադրում դատավորների վրա, հատկապես այն դեպքում, երբ դատարանում ներկայացված գործը կապված է քաղաքական բարոյությունների հետ:⁸⁶

Դատական համակարգի անկողմնակալությունը եւ անկախությունը գնահատելու համար պետք է պարզել, թե արդյոք ոստիկանության կողմից թուլ տված իրավախախտումների նկատմամբ քրեական հետապնդում իրականացվում է թե ոչ: Միայն այն դեպքում, երբ առկա են ոստիկանության կողմից կատարված չարաշահման դեպքեր, դատարանի դերը կարող է անգնահատելի լինել՝ ոստիկանությանը պատասխանատվության ենթարկելու հարցում: Գործընթացը դժվարանում է, երբ հաճախ, ոստիկանությունն ու քրեական հետապնդում իրականացնող մարմինները սերտ կապերի մեջ են գտնվում միմյանց հետ, ինչը, իր հերթին, կարող է խոչընդոտել ոստիկանության կողմից չարաշահման դեպքի վերաբերյալ գործի քննությանը դատարանի կողմից եւ անկողմնակալ դատավճռի կայացմանը: Իրականում, ամբողջ համակարգը

⁸⁵ՀՀ դատական օրենսգիրք, Հոդված 11(1)

⁸⁶Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավական նախաձեռնություն, Դատական համակարգի բարեփոխումների ինդեքս Հայաստանի Հանրապետության համար, Հատոր. III, էջ 3 (2008)

փոխկապակցված է: Դատավճիռը կլինի անկողմնակալ, եթե անկողմնակալ եւ արտաքին ճնշումներից զերծ լինի հետաքննությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԵՐՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հասարակական վերահսկողությունը, ինչը, ինչպես ընդունված է, ներառում է հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից կատարվող վերահսկողությունը, կարելի է կատարում ոստիկանությանը՝ սեփական գործողությունների համար հաշվետու պահելու հարցում: Յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության կարելի է նախապայմաններից է ակտիվ քաղաքացիական հասարակության առկայությունը: Համեմատած վերահսկողության այլ մեխանիզմների հետ՝ հասարակական վերահսկողությունը ավելի շատ կրում է նախաձեռնողական բնույթ եւ մշտապես հետեւում է ոստիկանության աշխատանքին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, մասնավորապես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը երաշխավորում է իշխանության, մասնավորապես պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական հիմնարկներից, պետություններից ֆինանսավորվող կազմակերպություններից, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններից եւ վերջիններիս պաշտոնյա անձանցից տեղեկատվություն փնտրելու եւ ստանալու իրավունքը:⁸⁷ Նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությունը եւ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Անշուշտ, 7-րդ հոդվածով սահմանվում է, որ եթե ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող տեղեկությունները, մասնավորապես բյուջեի, գրավոր հարցումների ձեւերի եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումների, հաստիքացուցակների, ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալների, այդ թվում մերժման հիմքերի եւ այլնի վերաբերյալ:

Պետական ինստիտուտների նկատմամբ վերահսկողության գործառույթներ իրականացնող քաղաքացիական հասարակության դերակատարների շարքում արժե առանձնացնել Երեւանի մամուլի ակումբն ու Ժուռնալիստների «Անպարեզ» ակումբը: Սրանք են այն երկու հիմնական առաջատար լրատվամիջոցները, որոնց նպատակն է խոսքի ազատության խթանումը եւ տեղեկատվության տրամադրումը հասարակության

⁸⁷ «Տեղեկատվության ազատության մասին » ՀՀ օրենք, Հոդված 3, 23 սեպտեմբերի 2003թ.

առավել լայն շրջանների: Երեւանի մամուլի ակումբը հետխորհրդային Հայաստանում հիմնադրված՝ լրագրողների առաջին մասնագիտացված ասոցիացիան է: Երեւանի մամուլի ակումբը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է լրագրողների, հրատարակիչների, լրատվամիջոցների առաջնորդների եւ փորձագետների՝ անկախ նրանց քաղաքական գաղափարների:⁸⁸ Երեւանի մամուլի ակումբը ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի եւ Բաց հասարակության ինստիտուտ օժանդակության հիմնադրամի աջակցությամբ իրականացրել եւ իրականացնում է բարեփոխումների, ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ լրատվամիջոցների շուրջ մի շարք ծրագրեր: Իրականացրած ծրագրերի շարքում են լրատվամիջոցների մոնիթորինգն ու հեռուստատեսային բանավեճերի կազմակերպումը Երեւանի համայնքային ընտրարշավի ժամանակ, բարեփոխումների խթանումը հայկական լրատվամիջոցներում, լրատվամիջոցների բազմազանությունը Հայաստանի Հանրապետությունում, ընտրական իրավունքից զրկելու գործընթացի հաղթահարումը բարեփոխումների մոնիթորինգի եւ հրապարակայնության միջոցով, ինքնակարգավորման մոդելի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում որպես լրատվամիջոցների ազատության պաշտպանիչ միջոց, ժողովրդավարության խթանումը հասարակական բանավեճի եւ բարեփոխումների մոնիթորինգի միջոցով, ռեսուրսների հզորացում ազատ եւ որակյալ լրատվամիջոցների համար եւ այլն: Բոլոր այս ծրագրերը կարող են մեծ դեր ունենալ քաղաքացիական հասարակության ստեղծման եւ վերջինիս մակարդակի բարձրացման, ինչպես նաեւ լրատվամիջոցներին՝ որպես հասարակական վերահսկման մեծագույն գործիք օգտագործելու հարցում:

Ընդհանուր առմամբ Երեւանի մամուլի ակումբի գործունեությունը նպատակաուղղված է անկախ եւ արհեստավարժ լրատվամիջոցների աջակցմանն ու հզորացմանը՝ օժանդակելով ժողովրդավարական հաստատությունների հզորացմանը եւ քաղաքացիական հասարակության հաստատմանը Հայաստանի Հանրապետությունում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հետապնդում է թերեւս նմանատիպ նպատակներ: Վերջինիս գործունեությունը նպատակաուղղված է խոսքի ազատության խթանմանը եւ ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության զարգացմանը: Ի թիվս այլոց, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը նպատակ ունի նաեւ ուսումնասիրել եւ գնահատել պետական պաշտոնատար անձանց աշխատանքի որակը եւ իրականացնել վերահսկողություն վերջիններիս նկատմամբ:

Տեղեկատվության հասանելիությունն ու մատչելիությունը հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների հիմնաքարն է՝ ոստիկանության, որպես պետական մարմնի, արդյունավետ վերահսկողության, ինչպես նաեւ ոստիկանական աշխատանքի եւ չարաշահումների հետ կապված բացահայտումների գործընթացում:

⁸⁸Հասանելի է՝ <http://www.ypc.am/eng>

Այս կապակցությամբ արժե հասցեագրել ոստիկանության պաշտոնական կայքէջը: Ոստիկանության կայքէջում առկա է հատուկ բաժին նվիրված նորություններին, որտեղ կարելի է ծանոթանալ ոստիկանության կողմից բացահայտված հանցագործությունների, վիճակագրական տվյալների, զանգվածային լրատվամիջոցների հետ հանդիպումների կամ ոստիկանության կողմից՝ հասարակական ծանուցումների հետ: Ոստիկանական աշխատանքի թափանցիկության շատ հետաքրքիր հայեցակետ է «02» հեռուստատեսային հաղորդաշարը, որի ժամանակ հասարակությանը պարբերաբար հաղորդվում է հանրապետությունում տիրող հանցավորության վիճակի մասին, ներկայացվում են հանցագործներ, ոստիկանության կողմից ձեռնարկված միջոցառումները հանցագործությունները կանխելու եւ վերջիններիս դեմ պայքարի շուրջ եւ այլն: Ոստիկանության կայքէջում կարելի է նաեւ կարդալ այս ծրագրի մասին, ինչը լավ ձեւ է ոստիկանության համար՝ բացելու իր դռները ավելի լայն հասարակության առջեւ եւ հրապարակայնեցնելու իր միջոցառումները:

Պաշտոնական կայքէջում առկա են նաեւ բաժիններ նվիրված ոստիկանության գործունեությանն առնչվող համապատասխան իրավական ակտերին, ոստիկանության ծառայող դառնալու ընթացակարգերին, վիճակագրություն, արխիվ, ոստիկանության պատմությունից, տեղեկատվություն արտագաղթի մասին եւ քվեարկողների ցանկը: Ներկայումս ոստիկանության կայքէջը հասանելի է միայն հայերեն լեզվով: Անշուշտ, շատ ավելի լավ կլիներ, որ կայքէջը լիներ նաեւ անգլերեն եւ ռուսերեն լեզուներով՝ ապահովելով հասարակության՝ տեղեկատվության ձեռքբերման ավելի լայն ընդգրկում:

Սույն զեկույցում, ավելի վաղ, արծարծվել են ոստիկանություն-հասարակություն հարաբերության եւ գործընկերության հետ կապված հարցեր: Ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկում հասարակության հետ կայուն գործընկերություն պահպանելու ուղղությամբ՝ հասարակությունից ստացված եւ ոստիկանությանը հասցեագրված բողոքների, դիմումների եւ առաջարկությունների միջոցով. նշված գործընթացը գտնվում է ՀՀ ոստիկանապետի անմիջական հսկողության ներքո:

Գործադիր մարմնի ներսում ստեղծված եւ խորհրդատվական կարգավիճակ ունեցող հետաքրքիր կառույցներից մեկը Հանրային խորհուրդն է: Վերջինս ստեղծվել է ՀՀ Նախագահ՝ Ս.Սարգսյանի կողմից: Այն փաստորեն կից է Նախագահի գրասենյակին: Նշված խորհրդի առանցքային նպատակն է քննարկել եւ խորհուրդ տալ Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը երկրում առկա հիմնական դժվարությունների վերաբերյալ, մասնավորապես ներկայացնել անձանց շահերը կապված հանրային վարչարարության մարմինների հետ: Հանրային խորհրդի խնդիրներն են՝

- նպաստել ժողովրդավարական հասարակության, ինչպես նաեւ մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների զարգացմանը,
- կանխել անհանդուրժողականությունը հասարակության շրջանում,

- խթանել քաղաքացիական հասարակության կայուն զարգացումն ու հզորացումը,
- նպաստել իշխանությունների, պետական եւ հասարակական կազմակերպությունների միջեւ փոխվստահության հաստատմանը,
- կառուցել երկխոսություն եւ արժանահավատ գործընկերություն հասարակության եւ իշխանությունների միջեւ,
- իրականացնել հասարակական վերահսկողություն:

Հանրային խորհուրդը ներկայացնում է հասարակության շահերը կապված պետական մարմինների հետ վերջիններիս հարաբերություններում, խթանում է հասարակական կազմակերպությունների եւ հասարակության անդամների մասնակցությունը հասարակական վարչարարության գործընթացին, ՀՀ նախագահի ուշադրությանն է արժանացնում հասարակական մտահոգություն եւ կարելիություն ներկայացնող հարցերը՝ այլընտրանքային մոտեցումների եւ դիրքորոշումների միջոցով: Հանրային խորհուրդն ունի 12 հանձնաժողով: Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովը զբաղվում է նաեւ ոստիկանության ոլորտի հիմնախնդիրներով: Հանրային խորհուրդը բաղկացած է 35 անդամից, որոնցից 12-ը նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից, մնացած մասը պետք է ներկայացնեն «տարբեր ոլորտներում» ներգրավված անձինք:

Այդուհանդերձ, այն փաստը, որ Հանրային խորհուրդը գործում է ՀՀ նախագահի անմիջական հսկողության ներքո, մեր կարծիքով, բացառում է նրա ինքնուրույն գործունեությունը: Հանրային վերահսկողության մարմինը անկարող է գործել արդյունավետ կերպով՝ քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներից առանձին: Հասարակական վերահսկողության արդյունավետությունը կարող է մեծանալ միայն քաղաքացիական հասարակության այլ դերակատարների հետ ակտիվ համագործակցության արդյունքում:

Քաղաքացիական հասարակության տարբեր դերակատարների շարքում կան նաեւ հասարակական դիտորդական խմբեր: Օրինակ՝ 2005թ. հունվարի 14-ին ՀՀ ոստիկանապետը արձակեց հրաման «Ոստիկանության բաժինների նախնական կալանքի պահման խուցերում հասարակական դիտորդական խմբի գործունեության վերաբերյալ»: Նույն հրամանի համաձայն 2006թ. մարտի 10-ին ՀՀ ոստիկանապետը, # 368 հրամանով հաստատեց հասարակական դիտորդական խմբի կազմը, որը բաղկացած է 11 անդամից, եւ ՀՀ ոստիկանությունը խմբի անդամներին տրամադրեց անդամակցության վկայական: Խմբի անդամներն ընտրվում են եռամյա ժամկետով: Խմբի կազմում են ներկայացուցիչներ մի շարք հասարակական, ինչպես նաեւ իրավական կազմակերպություններից: Խումբն իրենից ներկայացնում է վերահսկողություն իրականացնող մարմին, որի հանձնարարականն է ապահովել ոստիկանության համակարգի կալանավայրերում գտնվող մարդկանց մարդու իրավունքների եւ ազատությունների

պաշտպանությունը: Ըստ հրամանի՝ հմբի անդամներն իրավունք ունեն ազատ մուտք գործել ոստիկանության կալանավայրեր, հանդիպել կալանավորների հետ, ծանոթանալ կալանավայրի գործունեությունը կանոնակարգող իրավական ներքին փաստաթղթերի հետ, կալանավորների համաձայնությամբ ծանոթանալ վերջիններիս գործի եւ նամակագրության հետ (բացառությամբ պետական եւ պաշտոնական գաղտնիք պարունակող փաստաթղթերի):

Քաղաքացիական հասարակությունը կարող է դեր խաղալ իրազեկության տարածման եւ հանրային կարծիքի ձեւավորման հարցում: Ի վերջո, քաղաքացիական հասարակությունը կարող է մշակել ոլորտին առնչվող բարեփոխումներ՝ հասարակական կարծիքի հիման վրա, որը վճռական դեր ունի քաղաքագետների համար: Նույն քաղաքագետները կարող են ունենալ հասարակության աջակցության կարիքը հաջորդ ընտրությունների ժամանակ, հետեւաբար, այսօր չափազանց կարեւոր է նրանց միջեւ համագործակցությունը: Կարելի է խմբերի մոբիլիզացումը կարող է նպաստել պաշտոնյաների վրա ճնշում գործադրելուն, որպեսզի վերջիններս իրականացնեն համապատասխան բարեփոխումներ եւ ապահովել արձագանքող եւ հաշվետու ոստիկանության առկայությունը:⁸⁹

Ամփոփելով՝ նշենք, որ տեղեկատվության նախաձեռնողական բացահայտումը կարող է հիանալի միջոց լինել հաշվետվողականության խթանման հարցում:⁹⁰

⁸⁹Տե՛ս անդ.տող.ծանոթ. 80, էջ 57

⁹⁰Ոստիկանությունը, մարդիկ ու քաղաքականությունը. Ոստիկանության հաշվետվողականությունը Քենիայում, Մարդու իրավունքների համագործակցային նախաձեռնություն, էջ 35, 2006թ.

ԵԶՐԱՅԱՆ ԳՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոստիկանության հաշվետվողականությունը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության կարելիք տարրերից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ համընդհանուր այս կանոնից: Թե՛ ոստիկանության առանձին ծառայողները եւ թե՛ իրավապահ մարմինները պետք է հաշվետու լինեն իրենց գործողությունների համար: Ոստիկանության գործողությունների օրինականությունն ուղղակիորեն կախված է ոստիկանության պարագայում կիրառվող՝ հաշվետվողականության արդյունավետ ընթացակարգերից: Սա միակ օրինական ձեւն է, որի միջոցով ոստիկանությունը կարող է հասնել իր առջեւ դրված նպատակներին, այն է՝ նվազեցնել հանցավորությունը եւ անկարգությունները, մեծացնել հասարակական կյանքի որակը եւ պարզապես ծառայել համայնքի կարիքներին: Հակառակ այն հայտնի տեսակետին, որ հանցավորության արդյունավետ վերահսկողությունը եւ հարգանքը սահմանադրական սկզբունքների նկատմամբ մրցակցային արժեքներ են ոստիկանությունում (Փեքը, 1968), այսօր փորձագետները մեծապես ընդունում են, որ հանցավորության դեմ պայքարում կարելիք են օրինական վարքագիծը եւ հաշվետվողականությունը (Բեյլի, 2002):

Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության արդյունավետ հաշվետվողականության ապահովման ելակետը պետք է լինի ոստիկանության ղեկավարների, քաղաքականություն մշակողների, գիտնականների եւ քաղաքացիական հասարակության կողմից՝ ոստիկանության հաշվետվողականության նկատմամբ հետաքրքրության մեծացումը:

Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության կողմից ծառայությունների մատուցման արդյունավետությունը ապահովելու համար առաջին եւ ելակետային քայլը պետք է, անշուշտ, լինեն ոստիկանության ծառայողների կատարողականի կանոնավոր գնահատումները, որոնք պետք է լինեն արդար եւ օբյեկտիվ: Դա լավագույն միջոցն է բացահայտելու եւ ուղղելու կատարողականի հետ կապված բացթողումները, ինչպես նաեւ զգուշացնելու եւ աշխատանքից ազատելու ոստիկանության այն ծառայողներին, որոնց կատարողականը չի համապատասխանում ընդհանուր չափորոշիչներին: Ոստիկանության ծառայողների ոչ պատշաճ վարքագծի շուրջ մեղադրանքները կարող են ծագել թե՛ ներքին, թե՛ արտաքին աղբյուրներից: Արտաքին աղբյուրներից ստացված մեղադրանքները արժանի են հատուկ ուշադրության, քանի որ դրանք ներառում են քաղաքացիների կողմից ներկայացված պաշտոնական եւ ոչ պաշտոնական բողոքներ: Ահա այստեղ է, որ ոստիկանություն-հասարակություն գործընկերությունը կարելիք դեր է կատարում ամբողջ համակարգի վերահսկման հարցում:

Թեև ակնհայտ է, որ հասարակությունը կարող է դեր խաղալ ոստիկանության աշխատանքի որակի հարցում, սակայն 2009թ. ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կողմից անցկացված հասարակական կարծիքի անցկացման արդյունքում պարզ դարձավ, որ հասարակության 70-89 տոկոսը չի կամենում անձամբ համագործակցել ոստիկանության հետ: Համագործակցության միակ իրատեսական ձեւը նրանց համար ոստիկանությանը անհրաժեշտության դեպքում ահազանգելն է (Երեւանի բնակչության 77 տոկոսը): Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ ահազանգելուց բացի առկա են ոստիկանություն-հասարակություն համագործակցության այլ ձեւեր նաեւ, որոնց միջոցով կապահովվի ամենօրյա համագործակցություն եւ գործընկերություն: Վերջինիս միջոցով հնարավորություն կստեղծվի հասարակությանը ավելի մոտեցնել ոստիկանությանը եւ իրականացնել վերահսկողություն առավել լավ եւ մանրակրկիտ մակարդակով՝ ըմբռնելով փոխադարձ կարիքներն ու շահերը: Արեւմտյան երկրներում կիրառվող մոդելներից մեկը հասարակական ֆորումներն են, որոնց շուրջ հավաքվում են համապատասխան համայնքի անդամները՝ ոստիկանության հետ քննարկելու անվտանգության եւ պաշտպանության հետ կապված հարցեր:

Արդյունավետ վերահսկողության մեկ այլ տարբերակ կարող է հանդիսանալ Անվտանգության քաղաքային խորհուրդների ստեղծումը: Այս խորհուրդների կազմում ներգրավված են ոչ միայն քաղաքացիական հասարակության եւ ոստիկանության ներկայացուցիչներ, այլ նաեւ ներկայացուցիչներ այնպիսի հաստատություններից, որոնք զբաղվում են անվտանգության (բառի ավելի լայն իմաստով) հարցերով: Դրանց մեջ կարող են մտնել ներկայացուցիչներ ՀՀ Սոցիալական, Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունից, Երեւանի քաղաքապետարանից եւ այլն: Այս խորհուրդները կարող են հանդիսանալ ոստիկանությանը հաշվետու պահելու կանխիչ եւ նախաձեռնողական մեծ միջոցներ:

Օրենսդիրները եւ քաղաքականություն մշակողները ունեն ոստիկանության հաշվետվողականությունը բարելավելու ներուժ

Սովորաբար հասարակությունը ոստիկանության հանդեպ իր վստահությունը կորցնում է հաշվետվողականության բացակայության արդյունքում եւ փնտրում է արդարության այլընտրանքային ձեւեր: Սա, իր հերթին, հակառակ ազդեցություն է թողնում ոստիկանության վրա: Ի վերջո, հավանականությունը նվազում է, որ ոստիկանությունը կարող է առօրյա աշխատանքում ստանալ հասարակության համագործակցությունը: Համագործակցության պակասն, իր հերթին, կարող է ոստիկանությանը դրդել վերադառնալ բռնի մեթոդների՝ ապահովելու համապատասխանությունը հրամաններին: Հետեւաբար, ակնհայտ է դառնում, որ կառավարության բոլոր մակարդակները պետք է ներգրավված լինեն ոստիկանության համակարգի բարեփոխումների գործընթացում՝ մեծացնելով հաշվետվողականությունը, որի նպատակն է անպատժելիության մշակույթի վերացումը: Իրականում, ՀՀ կառավարությունը ձեռնարկել է մի շարք քայ-

լեր ուղղված ոստիկանության ներքին եւ արտաքին հաշվետվողականության ապահովմանը: Սակայն, այդ գործընթացը պետք է լինի շարունակական. դեռեւս կարող է լինել վերահսկողության մակարդակը բարձրացնելու՝ որոշակի միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Առկա է այն կարծիքը, որ երկրի խորհրդարանը կարելի է դեր է կատարում ամբողջ գործընթացում: Մասնավորապես, Անվտանգության, ՀՀ պարագայում պաշտպանության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովը պետք է օժտված լինի ոստիկանության գործունեության վերահսկողության առավել որոշակի գործառնությունով, այլ ոչ թե սահմանափակվելով սոսկ օրենսդրական նախագծերի մշակմամբ: ՀՀ ոստիկանության կողմից ծառայությունների մատուցման ոլորտում մեկ այլ կարելի է հայեցակետ կարող է հանդիսանալ օրենքով սահմանված այն դրույթը, որ ՀՀ ոստիկանապետը՝ ոստիկանության գործունեության, ձեռք բերված նպատակների եւ առճակատված դժվարությունների վերաբերյալ տարեկան զեկույցով հանդես գա Ազգային ժողովի առջեւ: Ավելի լավ կլիներ, եթե այդ զեկույցը տպագրվեր եւ հասանելի լիներ հանրությանը՝ ապահովելով թափանցիկության ավելի բարձր մակարդակ:

Ընդհանուր առմամբ, ոստիկանության հաշվետվողականության մեջ կառավարության ներգրավման առանցքային ձեւերից մեկը կարող է իրագործվել՝ ապահովելով, որ բավարար ֆինանսական միջոցներ հատկացվեն վերահսկողություն իրականացնող մարմինների եւ ոստիկանության ծառայողների պատշաճ վերապատրաստման համար: Կառավարությունը պետք է ապահովի նաեւ, որ համապատասխան օրենքները ոչ միայն լրացնեն միմյանց, այլ հիմնված լինեն մարդու իրավունքների վրա եւ զերծ լինեն սողանքներից: Օրենքները, նաեւ, պետք է կիրառվեն, եւ կառավարությունը պետք է ցույց տա, որ լուրջ է վերաբերվում մարդու իրավունքների չարաշահումների հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման հարցին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է ներգրավվել նաեւ հասարակության իրազեկությունը բարձրացնող տեղեկատվական արշավներում՝ հասարակությանը կրթելով իրենց իրավունքների վերաբերյալ եւ ապահովելով, որ վերջինս իրազեկ լինի այն հաստատությունների գոյությանը, որոնց կարող է դիմել ոստիկանության կողմից չարաշահման ենթարկվելու դեպքում:

Ոստիկանության հաշվետվողականության բարձրացում ոստիկանության համակարգի ներսում

Ոստիկանության ներսում նույնպես առկա է բարեփոխման ներուժ: Ոստիկանությունն ինքը կարող է հանդիսանալ իր համակարգի բարեփոխման իրականացնողը: Դրա ձեւերից մեկը ոստիկանության ներսում վերապատրաստման դասընթացների պրակտիկայի ձեւավորումն է: Վերապատրաստման դասընթացները կարող են կազմակերպ-

վել նոր աշխատակիցների, ինչպես նաեւ ոստիկանության համակարգում երկարա-
ժամկետ աշխատանքային փորձ ունեցող ծառայողների համար: Անշուշտ, վերապատ-
րաստման դասընթացների կազմակերպման համար միշտ էլ անհրաժեշտ են լրացուցիչ
ֆինանսական միջոցներ եւ ռեսուրսներ, ինչը կարող է ձեռք բերվել անվտանգության
ապահովման ոլորտում գործող միջազգային առաջատար կազմակերպությունների եւ
հաստատությունների հետ ակտիվ համագործակցության արդյունքում:

Ոստիկանությունը կարող է բացել անվճար ահազանգման հեռախոսահամարների
թեժ գծեր ոչ միայն Երեւանում, այլ նաեւ մարզերում, հատկապես հեռավոր, ինչը կօգ-
նի քաղաքացիներին տեղեկացնել ոստիկանության չարաշահումների եւ բռնություն-
ների մասին: Սա կարող է ուղեկցվել կանոնավոր հասարակական կարծիքի ուսում-
նասիրման հարցումներով, ինչի շնորհիվ ոստիկանությունը իրազեկ կլինի համայնքի
կարիքներին եւ որի արդյունքում ոստիկանության եւ հասարակության միջեւ կհաս-
տատվեն սերտ հարաբերություններ եւ վստահություն:

***Քաղաքացիական հասարակությունը կարող է մեծ դեր խաղալ ոստիկանության հաշ-
վետվողականության բարելավման հարցում***

Տեղական հասարակական կազմակերպությունները կարող են մեծապես նպաստել
ոստիկանության հաշվետվողականության բարելավմանը ոչ միայն ուղղակիորեն վե-
րահսկելով ոստիկանության գործողությունները եւ սոսկ հետեւելով ոստիկանության
ծառայողների ոչ պատշաճ վարքագծին կամ օրինախախտումներին, այլ նաեւ հա-
մագործակցելով եւ ոստիկանությանը օգնելով հասարակության նկատմամբ դառնալ
ավելի բարյացակամ:

Քաղաքացիական հասարակության եւ հասարակական կազմակերպությունները կա-
րող են կազմակերպել վերապատրաստման դասընթացներ եւ խորհրդաժողովներ ոս-
տիկանության անդամների համար, իրականացնել հասարակության իրազեկությունը
բարձրացնող տեղեկատվական արշավներ, կազմակերպել հեռուստատեսային եւ ռա-
դիո հաղորդումներ, բաժանել բուկլետներ եւ տեղեկատվական թերթիկներ եւ օգնել
ոստիկանությանը կապ հաստատել դոնոր կազմակերպությունների հետ՝ հնարավոր
բարեփոխումներ իրականացնելու նպատակով: Այն, ինչ հատկապես կարելու է հայ-
կական իրականության համար՝ հասարակական կամքն է եւ ըմբռնումը ստեղծել եւ
պահել մասնագիտացված, շահույթ չհետապնդող կազմակերպություններ վերահսկե-
լու ոստիկանության աշխատանքը: Երկրում առկա են զգալի թվով քաղաքացիական
պաշտպանության կազմակերպություններ, սակայն, վերջիններս չունեն որոշակի ուղղ-
վածություն տվյալ սեկտորի նկատմամբ եւ դժվար թե ինչ-որ մեկը գտնի վերահսկո-
ղության գործառնություն կատարող հասարակական կազմակերպություն, որն ուղղակի-
որեն զբաղվում է ոստիկանության ծառայողների մասնագիտական աշխատանքի, էթի-
կայի եւ կարգապահության վերահսկմամբ, որի հետ վերջինս կարող է համագործակ-
ցել եւ մեծացնել ոստիկանություն-հասարակություն գործընկերության մակարդակը:

Այլ հնարավոր միջոցներ

Ոստիկանության հաշվետվողականությունը մեծացնելու նպատակով անշուշտ կարելի է նաեւ ապահովել տեղեկատվության եւ փորձառության փոխանակումը պետական տարբեր հաստատությունների, հետազոտական կառույցների եւ համալսարանների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաեւ առաջատար միջազգային կազմակերպությունների եւ այլ երկրների միջեւ: Հետեւաբար, կարելի է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նշված փորձառությունը ձեռք բերի այն երկրներից, որտեղ գործում են հաջողված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում բարելավվել է ոստիկանության հաշվետվողականությունը: Այս ձեւով կարող է իրականացվել գիտելիքի եւ մարտավարության փոխանակում: Ուսումնասիրությունների, տեղեկատվության եւ փորձառության փոխանակում կարող է տեղի ունենալ տարածաշրջանային արդեն իսկ գոյություն ունեցող ցանցերում եւ մեխանիզմներում Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցության շնորհիվ:

Ժողովրդավարական հասարակությունում չպետք է լինի ոստիկանության կողմից դրսեւորվող՝ անպատժելիության եւ բռնության մշակույթը, հետեւաբար, ոստիկանության գործունեության վերահսկման եւ արդյունավետ հաշվետվողականության մեխանիզմները պետք է ըստ պատշաճի կիրառվեն տվյալ երկրում: Օրենքներին խստորեն ենթարկվելը միայն ոստիկանության պարտականությունը չէ: Ոստիկանության արդյունավետ հաշվետվողականությունը, անշուշտ, բաղկացած է վերահսկողության ներքին եւ արտաքին մեխանիզմներից, որոնք ուղեկցվում են բոլոր մակարդակներում կիրառելի, հստակ շարադրված օրենքներով եւ քաղաքականություններով:



ՏԳՈՂՈԿՏՈՍ

